

ՇՆՈՐՀԱՎՈՐ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Սարդարապատի Հաղթանակը.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք .....2
- 3- Լուրեր – Հայաստան.....3
- 4- Հասարակական.....4
- 5- Խոհեր .....10
- 6- Մշակույթ .....12
- 7- Չանագանք.....13

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք .....1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2



Շապիկի առաջին եւ վերջին էջում՝


Սարդարապատ



Համար 151, Մայիս 2009թ.

No. 151, May 2009

ماهنامه لویس - شماره ۱۵۱ خرداد ماه ۱۳۸۸



Մայիսը ծաղիկների, տոների ու հաղթանակների ամիս է: Մայիսի 1-ը աշխարհի աշխատավորների համերաշխության օրն է: Մայիսի 9-ը ֆաշիզմի դեմ տարած աշխարհի առաջադեմ մարդկության, այդ թվում հայ ժողովրդի հաղթանակի օրն է, ինչպես նաև Շուշի բերդաքաղաքի ազատագրման պանծալի տարեդարձի օրը, իսկ մայիսի 27-ը Սարդարապատի հերոսական ճակատամարտի հաղթանակի օրն է: Այսպիսով՝ հպարտանալու, գոտեպնդվելու ու ապագային վստահորեն նայելու բավարար առիթներ կան:

Պատմությունը այն բանի համար է, որ ոչինչ չմոռացվի և ծառայի որպես լույս փարոս ապագայի անելիքների ուղին ճշգրտելու համար: Հայ ժողովուրդը գրել է և կշարունակի գրել իր պատմությունը՝ իր ազգային շահերից ելնելով, հարագատ մնալով համամարդկային չափանիշներին: Ժամանակի ու պայմանների անբարենպաստ պայմաններում քաղաքական համոզմունքների ու աշխարհայացքների բախման մթնոլորտում, հաճախ լինում են սեփական պատմության տարբեր մեկնաբանումներ: Այս տեսակետից Սարդարապատի պատմությունը բացառություն չի կազմում:

Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող Սարդարապատի հերոսական ճակատամարտի պատմությունը դեռ մեկնաբանելու ու լուսաբանելու շատ կողմեր ունի: Անհրաժեշտ պահանջ է ազնիվ ու շիտակ լինել սեփական պատմության նկատմամբ, չխուսափել թերությունների ու թույլ տված սխալների վեր հանումից, քննարկումից ու անգամ դատապարտումից: Միայն ազնիվ ու շիտակ մոտեցումով և ճշտելով անցյալի սխալները, կարելի կլինի վստահ ու անվտանգ շարունակել պատմության զարգացման ուղին:

Կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանի «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» վավերագրական կինոժապավենը հենց այս մտահոգություններից ելնելով է ստեղծվել (*այն ցուցադրվելու է Լոնդոնում մայիսի 29-ին: Տես կից հայտարարությունը*): Նպատակ չունեմ մեկնաբանելու կինոժապավենը, բայց ցանկանում եմ խորհուրդ տալ անպայման դիտել այս արժեքավոր գործը:

Տիգրան Խզմալյանի «Սարդարապատ» ժապավենի շուրջ կան տարբեր մեկնաբանումներ Հայաստանում: Գերակշռում է դրական գնահատականն ու իրախուսականը: Եղան կողմնակալ ու որոշ քաղաքական կուսակցությունների անգամ թշնամական կեցվացքներ: Տարբեր տեսակի խոչընդոտներ սեղծվեցին ժապավենի ցուցադրման ուղղությամբ: Անգամ Երևանի «Կինո Մոսկվայի» վճարված սրահը չտրամադրվեց ժապավենը ցուցադրելու համար:

Սարդարապատի ճակատամարտը տեղի էր ունենում ռազմական ու քաղաքական ծանրագույն պայմաններում, քայքայվում էր Անդրկովկասի «Մեյմ» կոչվող անտրամաբանական միությունը (Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի): Թուրքերը Բաթումում

սկանջները սրած Սարդարապատից լուրեր էին սպասում ճշտելու համար իրենց վերաբերմունքը Թիֆլիզից ժամանող հայերի պատվիրակության նկատմամբ: «Հայոց ազգային խորհուրդը» անտեղյակ ամեն բանից, Թիֆլիզում նստած Կաթողիկոսին խորհուրդ էր տալիս թողնել Էջմիածինը և տեղափոխվել Սևանի կղզի, իսկ անփառունակ գենրալ Նազարբեկովը պատրաստվում էր թուրքերի ողորմածությանը հանձնելու Երևանը... Այսպիսի անկազմակերպ ու անդեկավար պայմաններում **հնչեցին զանգերը ու աշխարհագրայիններ կրկին «մահ իմացյալ անմահություն» գիտակցությամբ կռվի ելան Սարդարապատում ու հաղթեցին...**

**Գոյատևեց հայ ժողովուրդն ու Հայաստանը:**

Կարճ ընդմիջումից հետո կրկին բռնկվեցին պատերազմի հրդեհները: Հերթական տնտեսական ճգնաժամը սանձազերծեց երկրորդ աշխարհամարտը: Սարդարապատի հերոսական ճակատամարտի մասնակից Հովհաննես Բաղդասարյանն արդեն մարշալի կոչումով կռվում էր գերմանական ֆաշիզմի դեմ, ազատագրելով եվրոպական երկրները: Վանեցի գեներալ Նվեր Սաֆարյանը «Թամանյան» հայկական դիվիզիան ղեկավարելով հազարավոր հայ զինվորներին դեպի Բեռլին էր տանում՝ ազատագրելով Եվրոպայի ժողովուրդներին ֆաշիզմի ճիրաններից: Մի առիթով գեներալ Նվեր Սաֆարյանը այսպես է արտահայտվել. Կռվելով ու ազատագրելով Եվրոպական երկրները, հայ զինվորը խորապես գիտակցում էր, որ Կարմիր բանակի պարտության դեպքում Թուրքիայի բանակը ներխուժելու է Կովկաս և Արևելյան Հայաստանի բնակչության հետ անելու է այն, ինչը կատարեց Արևմտյն Հայաստանի հետ, մի բան, որ նրան չհաջողվեց անել Սարդարապատում 1918թ. մայիսի 27-ին:

**Երկրորդ աշխարհամարտի հաղթանակը նաև հայ ժողովրդի 300 000 լավագույն զավակների կյանքի թանկ գնով ապահովվեց: Ֆաշիզմը ջախջախվեց, Հայաստանն ու հայ ժողովուրդը ապրեցին:**

Կրկին Համաշխարհային տնտեսական ճգնաժամ է, ո՞ր է տանելու մարդկությանը, դեռ ոչ ոք չգիտի: Ո՞վքեր են պատասխանատու այս սհռելի զրբալ ճգնաժամի համար, ո՞ւմ պետք է դատարան տանել, ո՞ւմից պետք է հատուցում պահանջել՝ դեռ պարզ չէ... Տնտեսական, քաղաքական ու ռազմական այս անորոշ ու վտանգավոր պայմաններում ժողովրդի մեծերի լուսավոր մտքերին պետք է ունկնդրել: «Մարդն էն է այս աշխարհում, գլուխը պահի էլքիբարով»,- ինչպես ասել է Մայթ- Նովան:

Թուրքիայի հանրապետության ղեկավարները ոչ միայն չեն պատրաստվում հայ ժողովրդի դեմ գործադրած ցեղասպանության իրողությունը ճանաչելու, այլ նույնիսկ Հայաստանի շրջափակումին վերջ դնելու ու սահմաններ բացելու համար, Արցախը Ադրբեյջանին վերադարձնելու նախապայման են դնում: Վախեցնում են, թե Թուրքիայում ոչ օրինավոր կարգավիճակով ապրող Հայաստանի քառասուն հազար հայերի կարտաքսեն:

Թուրքիայի պետության այսօրվա ագրեսիվ կեցվածքը, երբ աշխարհի մարդկության բաց աչքերի առաջ ռազմական ներխուժում է կատարում Եվրամիության և Միացյալ Ազգերի Կազմակերպության լիարժեք անդամ հանդիսացող երկիր Կիպրոս և ցանկացած պահին խախտելով Իրաքի պետական սահմանը կոտորում է Իրաքի հյուսիսում ապրող քուրդ բնակչությանը ու մնում է անպատիժ, ուստի առողջ ու ողջամիտ դատողությունը թելադրում է. Կանգնեցնել բանակցությունները Թուրքիայի հետ: Հայ ժողովուրդը պետք է պահանջի Թուրքիայի կողմից Հայաստանի վրա չհարձակվելու պակտ, որը պետք է երաշխավորեն Ամերկայի Միացյալ Նահանգները, Եվրամիության անդամ երկրները և Ռուսաստանի Դաշնությունը:

Հայ ժողովուրդը ցեղասպանության ենթարկված ժողովուրդ է, մենք պետք է կրկնակի աչալուրջ լինենք:

**Հավերժ փառք Սարդարապատի կերտողներին:**  
Դոկտոր Արամայիս Միրզախանյան  
27 մայիս 2009թ.  
Մթոքհով, Շվեդիա [aramais.m@live.se](mailto:aramais.m@live.se)

**Իրանահայ Համայնք**

**Հայոց Մեծ Եղեռնի զոհերի ոգեկոչման միջոցառում «ՐաՖՖի» համալիրում**

2009 թվականի ապրիլի 30-ին ՀՍՍ «ՐաՖՖի» Համալիրում տեղի ունեցավ ձեռնարկ նվիրված Մեծ Եղեռնի 94-րդ տարելիցին: Նախքան ծրագրի սկսելը ցուցադրվում էր «Սարդարապատ» Ֆիլմը: Նախ աղոթքով կատարվեց միջոցառման բացումը, որից հետո համալիրի սկաուտները, տողանցքով և ծաղիկներ դնելով Հրանդ Դիմքի նկարի մոտ, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայոց Մեծ Եղեռնի զոհվածների հիշատակին: Բացման խոսք ասաց ժոզեֆ Ամիրյանը, որից հետո որպես օրվա բանախոս հանդես եկավ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կանաց բաժնի նախագահ և վաստակավոր ուսուցիչ տիկ. Աստղիկ Բաբայանը: Այնուհետև տեղի ունեցավ գեղարվեստական ծրագիր, որտեղ ասմունքեցին հանդես եկան սկաուտներ Արթին Բաղդունյանը, Մեղրի Բուդադյանը, Արգիշտի Աղաջանյանը և կանանց բաժնից տիկ. Արմիկ Խուդաբախյանը: Համալիրի «Անի» պարաֆունը, ղեկավարությամբ տիկ. Էլզա Մինասյանի ներկայացրեց իր ելույթը, որից հետո համալիրի «Մեղեդի» կանանց երգչախումբը, դկտ. Զարուհի Ենգոյանի ղեկավարությամբ, ներկայացրին ազգագրական երգեր: Վերջում իր խոսքն արտահայտեց, Թեհրանի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ Տ. Սեպու արք. Սարգսյանը:

**Կյանքի կոչվեց՝ համայնքի կողմից ՀՀ-ում գնված հողամասի շահագործման հանձնախումբ**

Արդեն տեղյակ ենք, որ թեհրանահայ համայնքի կողմից Հայաստանի Հանրապետությունում Աբովյան քաղաքի մոտակայքում քանի հեկտար հողամաս է գնվել Թեմական Խորհրդի կողմից, որպեսզի այն ուսումնասիրվի և հետագայում ծառայի որպես բնակարաններ և արդյունաբերական կենտրոններ իրանահայ համայնքի անդամների, հատկապես

երիտասարդների համար, նպատակ ունենալով, որ ԱՄՆ արտագաղթելու փոխարեն իրանահայությունը մեկնի հայրենիք, ապահովված լինելով աշխատանքով ու բնակարանով:

Թեմական հորհուրդը իր նպատակները իրականացնելու ուղղությամբ Հայաստանում գրանցել է մի ընկերություն, որը պատկանում է Թեմական հորհրդին, իսկ գնված հողամասը պատկանում է այդ ընկերությանը: Լավ կլինի Թեմական հորհուրդը համայնքին տեղյակ պահի, թե այդ ընկերությունը ինչ կարգավիճակով է գրանցվել և ովքեր են համարվում դրա բաժնատերերը և գործադիր տնօրենը: Հույսով ենք թափանցիկությունը պահպանելու և համայնքի վստահությունը շահելու նպատակով Թեմական հորհուրդը նման տեղեկություններ կփոխանցի մեր համայնքին, որպեսզի հարկ եղած պարագայում օգտվի համայնքի բարոյական և նյութական պոտենցիալ ուժերից:

Այս նպատակը իրականացնելու համար, մտքերի փոխանակություն է տեղի ունեցել ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովում, սակայն բոլոր պատգամավորները եկան այն եզրակացության, որ թույլ տանք տվյալ հանձնախումբը կատարի իր ուսումնասիրությունը և իր եզրակացությունը և առաջարկները ներկայացնի Պատգամավորական ժողովին ի քննարկում և վավերացում: ԹԽ-ի նախագահ դկտ. Այիդա Հովհաննիսյանը խոստացավ, որ մոտ ապագայում հանձնախումբը կը կատարի իր պարտականությունը:

### ՆՈՐ ՋՈՒՂԱ Սպահանի Հայոց Թեմի Տեղեկատու

Արդեն մոտ 7 տարի է, որ հրատարակվում է Սպահանի Հայոց Թեմի «Նոր Ջուղա» երկամսյա պաշտոնաթերթը: Մինչ այժմ լույս է տեսել 70 համար: Վերջերս լույս տեսավ այդ թերթի 70-րդ համարը, որը նվիրված է Հայ Երիտասարդության տարվան: Այս համարում տպագրվել է Հայրապետական պատգամ՝ 2009 թվականը «Երիտասարդության Տարի» հռչակելու ուղղությամբ, Սպահանի Հայոց Թեմի 14-րդ Պատգամավորական ժողովի ընտրությունների արդյունքի մասին, թեմական լուրեր, Իրանի Իսլամական Հեղափոխության տարեդարձի կապակցությամբ միջոցառումների մասին, որոնք նախաձեռնել է Իսպահանի Հայոց Թեմը, ամանորի միջոցառումների, «Փերիո» Կրթասիրաց Միության 80 ամյակի տոնակատարության մասին և այլն:

### Ստացված գրություն

Իրանահայ բանաստեղծ, բարերար ու հասարակական գործիչ պրն. Հովիկ Էդգարյանի կողմից ստացել ենք մի գրություն, որը նույնությամբ ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը: «Տեղեկանում ենք, որ Երևանի «Փարաքար» երաժշտական դպրոցը վերանվանվել է իրանահայ երաժիշտ-բանաստեղծ Հովիկ Էդգարյանի անունով և շենքը ընդարձակվելով կոչվում է «Հովիկ Էդգարյան արվեստից դպրոց», որտեղ, բացի երաժշտությունից, դասավանդվում են բոլոր արվեստները:

Երևանի երաժշտական գործիքների և գրքերի թանգարանը նաև պատրաստվում է նոր շենք կառուցել, որը ևս կոչվելու է Հովիկ Էդգարյանի անունով»:

## Հայաստան

### «Նաիրիտ-2»-ում բռնկված հրդեհի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Նաիրիտ-2»-ում բռնկված հրդեհի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Գործարանի տնօրեն Ալբերտ Սուքիասյանն «Արմենպրես»-ին տեղեկացրեց, որ կրակը բռնկվել է գործարանի ետեվի մասում գտնվող աղբավայրում: Այն անմիջապես հանգցվել է՝ առանց վնաս պատճառելու:

«Նաիրիտ-2» ՓԲ ընկերությունը հիմնականում լուծում է ՉԺՀ-ում քլորոպրենային կաուչուկների արտադրության համատեղ ձեռնարկություն ստեղծելու հետ կապված նախագծային խնդիրները, կատարում է նաև արտադրական ծառայություններ: Ներկայում չինական կողմի հետ համատեղ Չինաստանում կառուցում է կաուչուկի գործարան: Ա. Սուքիասյանի խոսքով՝ գործարանի կառուցման աշխատանքներն ընթանում են սահմանված ժամանակացույցով: Առաջիկայում սպասվում է գործարանի փորձնական գործարկումը: Դրա պաշտոնական բացմանը նախատեսված է այս տարեվերջին:

### ՄԱՍՈՆՆԵՐ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՂՈՒՄ

«Գրան Օրիան դը Ֆրանս» մասոնական կազմակերպության ներկայացուցիչները եկել էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր 1915-ի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար: Ինչպես լրագրողների հետ զրույցում նշեց կազմակերպությունը ներկայացնող հայազգի Գի Հակոբյանը, իր համար անընդունելի է, որ Թուրքիան ցեղասպանության ճանաչման հարցում մերժողական քաղաքականություն է վարում, պետք է ջանք չխնայել արդարությունը հաստատելու համար: «Մենք ապրիլի 24-ին երրորդ անգամ ենք այցելում Հայաստան՝ հարգանքի տուրք մատուցելու համար: Մարդկությունը չպետք է մոռանա նման դեպքերը: Ժամանակն է, որ ինչպես Ֆրանսիան, այնպես էլ այլ երկրները ճանաչեն 1915-ին կատարվածը», ասաց Գ. Հակոբյանը: Ըստ նրա՝ իրենց համար կարևոր է Հայոց ցեղասպանության հարցի լուծումը, եւ իրենք շարունակում են աջակցել սփյուռքահայությանը, հաղորդում է «Արմենպրեսը»:

### ԻՐԱՆԻՑ ՉԱՋ Է ՄՂՎՈՒՄ ԴԵՊԻ ՇԱՅԱՍԱՆ

«Ազատություն» ռադիոկայանը, հղում անելով իրանական լրատվամիջոցներին, նշում է, որ Իրանի գազ արտահանող ազգային ընկերության տնօրեն Սեյեդ Ռեզա Կասաբիզադեն հայտարարել է, որ չորեքշաբթի օրը Իրանը սկսել է գազ արտահանել Հայաստան: Հաղորդվում է, որ մինչեւ 2010-ի վերջը օրական 3 մլն խորանարդ մետր գազ է մղվելու, իսկ 2011-ից՝ 4 մլն: Յուրաքանչյուր խորանարդ մետրի

դիմաց Հայաստանը կվճարի 3 կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա:

### Նշվեց Արկադի Տեր-Թադևոսյանի ծննդյան 70-ամյակը

ԵՐԵՎԱՆ, 27 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի պետական համալսարանում (ԵՊՀ) այսօր տեղի ունեցավ Արցախի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) ծննդյան 70-ամյակին նվիրված երեկո, որը կազմակերպվել էր «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի նախաձեռնությամբ: Ինչպես նշեց ակումբի ղեկավար Սաթենիկ Աբրահամյանը, Կոմանդոսը, չնայած իր կոչումներին եւ մեծ փառքին, բավականին պարզ ու համեստ մարդ է, ով իր բարության սերմերը շաղ է տալիս բոլորի սրտում:

## Շասարակական

### Համայնքի կալվածների շուրջ

Արդյո՞ք մեր համայնքի անդամները իրավունք ունեն իրենց համայնքին պատկանող կալվածների շուրջ տեղեկություններ ունենալ, թե՞ ոչ: Այս հարցի մասին տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Անցյալում ԹՀԹ-ի գործադիր մարմինների անդամներն այնքան էլ ցանկություն չեն ունեցել թափանցիկ ձևով դրանց մասին խոսել, Պատգամավորական ժողովում նրանց համակրող պատգամավորներն նույնպես հետևել են նույն մոտեցմանը, սակայն անկախ պատգամավորները միշտ ցանկացել են որոշակի տեղեկություններ ունենալ համայնքում ազգապատկան կալվածների մասին: Առաջին կարծիքի տեր մարդիկ այսպես էին հիմնավորում իրենց տեսակետը, թե իբր դա ազգային գաղտնիք պետք է լինի և հատուկ մարդիկ իրավունք ունեն դրանց մասին մանրամասն տեղեկություններ ունենալ և տնօրինել այդ հարցը: Երկրորդ կարծիքի տեր մարդիկ, պնդում էին, որ ոչ մի բան մեր ժողովրդից գաղտնի չպետք է լինի և ազգային կյանքում պետք է լինի թափանցիկություն, որպեսզի ժողովրդի վստահությունը կարողանան շահել, բացի դա, ոչ թափանցիկ աշխատանքները, հատկապես կալվածային ու նյութական բնագավառում, չարաշահումների տեղիք կարող են տալ, կամ՝ գոնե ժողովրդի պատգամավորից չպետք է որևէ գաղտնիք մնա:

Վերջերս վերոհիշյալ կարծիքների, հատկապես առաջին կարծիքի տեր մարդկանց մոտ առաջացել են դրական տեղաշարժեր և կարծես նրանք էլ եկել են այն համոզմունքի, որ պետք է ժողովրդին տեղյակ պահել շատ հարցերից, հատկապես համայնքի նյութական ու կալվածային հարցերից: Նման փաստի մասին է խոսում վերջերս այն

զեկույցը, որը ներկայացրեց համայնքի գործադիր մարմինը՝ Թեմական Խորհուրդը երկրորդ նիստին, որտեղ խոսվեց մի շարք կալվածների մասին, որոնք վաճառքի են դրված, մի մասը պետք է վերակառուցվեն, որոշ մասը վերանորոգվեն ու հասութաբեր դառնան որևէ նպատակի ծառայեցնելու համար:

Հույսով ենք նման թափանցիկությունը կպահպանվի նաև նոր՝ գալիք Թեմական Խորհրդի աշխատանքի ու քաղաքականության ոլորտում:

### ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովի 5-րդ նիստը

Մաս 1

2009 թվականի ապրիլի 28-ին ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ ԹՀԹ-ի 14-րդ շրջանի Պատգամավորական ժողովի 5-րդ նիստը: Նիստին 54 պատգամավորներից ներկա էին 42-ը:

Տեղումնական աղոթքից ու ներկայության ստուգումից հետո ընթերցվեցին նախորդ երկու նիստերի արձանագրությունները: Այստեղ հետաքրքիր մի երևույթ տեղի ունեցավ. նախորդ նիստերի ժամանակ հարց էր տրվել, որ համայնքի կողմից «Ալիք» օրաթերթի շենքի կառուցման համար տրված պարտքը՝ (90 միլիոն թուման) վերադարձվել է, թե՛ ոչ և պատասխանն այն եղավ, որ այս հարցը պետք է ուղղվի նյութական զեկույց ներկայացնելու ժամանակ, որը պետք է տեղի ունենա շուտով՝ Թեմական Խորհրդի երկամյա զեկույցի ժամանակ: Սակայն արձանագրության մեջ հիշատակվել էր, որ այդ կապակցությամբ հարց եղավ և ի պատասխան նշվեց, որ պարտքը վերադարձված է: ԹԽ-ի նախագահ դկտ. Այիդա Հովհաննիսյանը նաև երբ արձանագրության այդ կետի մասին հարց տրվեց ասաց, որ տարիներ առաջ այդ վարկը վերադարձվել է: Կարծում ենք, որ համայնքին շփոթմունքից հանելու համար պետք է ներկայացվի նախկին այն նյութական զեկույցը, որտեղ խոսվում է այդ պարտքի վերադարձման մասին:

Արձանագրություններում որոշ ճշտումներ կատարելուց հետո ՊԺ-ի դիվանը ընթերցեց ստացած գրություններ, որոնց շուրջ եղան մտքերի փոխանակում, Սրբազան Հայրը նաև արտահայտեց իր միտքը այդ գրությունների կապակցությամբ: Այդ գրությունների բովանդակության ու մտքերի փոխանակության հիմնական և կարևոր մասերը ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

1- Դիվանը Թեմական Խորհրդի կողմից ստացել է 2007-2009 ապրիլի երկամյա գործունեության բարոյական և նյութական զեկույցը: Դա նախնական զեկույցի տարբերակն է: Տեղեկացվեց, որ պատգամավորները, որոնք հետաքրքրված են, կարող են առաջնորդարանի գրասենյակում զեկույցը ընթերցեն:

2- Երկրորդ նամակը վերաբերում էր Ձեյթուն (Մաջիդիե) թաղամասի «Մարիամյան» ուղղեցույց տղայոց դպրոցի աշակերտության ծնողների մտահոգություններին, որոնք ներկայացրել էին իրենց թաղի մի խումբ պատգամավորների ուշադրությանը, պատգամավորները այդ մտահոգությունը գրավոր փոխանցել էին դիվանին, նամակի բովանդակությունը վերաբերում էր դպրոցի կրթական մակարդակի իջնելուն և կրթական ստանդարտ նորմերին

չհամապատասխանելուն: Ըստ պատգամավորների՝ դա պատճառ է դարձել վերջին երկու տարիների ընթացքում ծնողները իրենց աշակերտությանը արձանագրեն այլ դպրոցներ: Քիչ է մնացել տարին վերջանա, և դպրոցի 5-րդ դասարանի աշակերտության ծնողները՝ նաև այդ դպրոցի ուղղեցույցի համակարգի ցածր մակարդակի պատճառով մտահոգություն են արտահայտել, և դիմել են պատգամավորներին, որ պարզեն թե արդյոք որևէ դրական քայլեր ձեռնարկվելու են կրթական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, թե ոչ, որպեսզի ժամանակին իրենց երեխաներին ուղարկեն «Մարիամյան» դպրոց կամ մի ուրիշ մի դպրոց: Պատգամավորները դպրոցի կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով նշել էին, որ դիմում ենք Ձեզ այս հարցը կարգավորելու և անհրաժեշտ քայլերը վերցնելու համար: Այս նամակը հղվել և ստորագրվել էր հետևյալ պատգամավորների կողմից՝ 1- Վահե Խաչատրյան, 2- Վալոդ Զախինյան, 3- Ալբերթ Քոչարյան և 4- Զենրիկ Կարապետյան: Դիվանը նշեց, որ նամակի պատճեն կը հանձնի թեմական Խորհրդին ի տեղեկություն:

Վերոհիշյալ նամակը պատճառ դարձավ, որ Սրբազան Զայրը արտահայտի հետևյալ մտքերը.- «Սա կրթական հարց է, և եթե ամեն մի պատգամավոր նման հարցեր բերի այս ժողովին, այնուհետև ժողովը կը կորցնի իր առաքելությունը և կզբաղվի գործադիր իշխանությանը վերաբերվող հարցերով: Ստիպված եմ Ձեր ուշադրությանը հանձնեն նման դիտողություններ: Դպրոցը ծնողական խորհուրդ ունի և կա Կրթական Խորհուրդ ու թեմական Խորհուրդ և վերջում Պատգամավորական ժողով: Եթե այսպես շրջանցենք նրանց և շարունակենք, կը նշանակի, որ մյուս պատգամավորները ուրիշ հարցեր կբերեն այստեղ, այսպես չի լինի աշխատել, պատգամավորները պետք է աչալուրջ վերաբերվեն և իմանան, որ նման մտահոգությունները բոլորի մտահոգությունն է: Նման նամակի ներկայացնելը կը նշանակի, որ մեր գործադիր մարմինները լավ չեն աշխատում»:

3- Այս նամակը մի խումբ պատգամավորներ հղել էին ՊԺ-ի դիվանին.-«Նկատի ունենալով Իրանի նախագահական ընտրությունների կարևորությունը համայնքի մշակութային ու կրթական կյանքի վրա, ՊԺ-ի դիվանին առաջարկվում է թեմական Խորհրդի մասնակցությամբ կազմակերպել հանդիպումներ Իրանի նախագահական ընտրությունների բոլոր թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների հետ, որտեղ կներկայացվեն համայնքի մշակութային, հասարակական, մարզական և այլ բնագավառի հարցեր և պահանջեն համապատասխան լուծումներ»: Այս նամակի տակ իրենց ստորագրություններն են դրել Մաջիդիեի թաղամասի պատգամավորներ՝ Ալբերթ Քոչարյանը, Վահե Խաչատրյանը, Վալոդ Զախինյանը, Էլիպս Մասեհյանը և Ռոզիկ Տեր Զովհանիսյանը:

Վերոհիշյալ նամակի շուրջ իր խոսքը արտահայտեց Սրբազան Զայրը, ասելով, որ «Թեմական Խորհուրդը զբաղվում է այդ հարցով և հանձնախումբ է կյանքի կոչվել և այս բոլոր գործերը արվել են, ԹԽ-ի անձերը այս գաղութի հետ գործ ունեն և գիտեն ինչ անեն: Մենք, որպես Պատգամավորական ժողով, ուրիշ գործ ունենք անելու և մեր Ֆունկցիաները տարբեր են»: ԹԽ-ի նախագահ դկտ. Արդա Զովհանիսյանը տեղեկացրեց, որ այդ ուղղությամբ քայլերը վերցված են և հանդիպումներ կլինեն:

Ի տեղեկություն մեր ընթերցողներին պետք է նշենք, որ մայիսի 19-ին ԹԽ-ն վերոհիշյալ հարցը քննարկելու համար կազմակերպել էր հանդիպում թեմի Բոլոր միությունների նախագահների կամ փոխնախագահների ու մի շարք ազգայինների ու ՊԺ-ի անդամների հետ:

Դիվանի փոխատենմապետ պրն. Ռոբերթ Մարգարյանը ի պատասխան Սրբազան Զոր մտահոգություններին ասաց, որ «Եթե պատգամավորի մոտ մտահոգություն է առաջանում պետք է ճշտված լինի դրա ներկայացնելու ձևը, պատգամավորը ընտրվել է ժողովրդի կողմից և ունի ժողովրդի ձայնը: Եթե պատգամավորը ուղղակի դիմեր թեմական Խորհրդին, մեր դիվանը պետք է բողոքեր, թե ինչու եք ՊԺ-ի դիվանին շրջանցել և ուղղակի եք կապվել ԹԽ-ի հետ: Պատգամավորները ճիշտ են արել, որ նամակը ուղարկել են ՊԺ-ի դիվանին, հիմա, եթե դիվանը հարմար նկատի, կզբաղվի կամ որևէ այլ քայլ կվերցնի, չեն կարծում այստեղ անհանգստանալու որևէ հարց լինի Սրբազան Զոր կողմից: Պատգամավորները չեն իմացել, որ ԹԽ-ն նախաձեռնել է Իրանի նախագահական թեկնածուների հետ հանդիպումը և դրա համար իրենց մտահոգությունն են հայտնել»: Սրբազան Զայրը ի պատասխան Ռ. Մարգարյանին ասաց, որ «Ես չեմ ասում, որ պատգամավորը իրավունք չունի հարցադրում անի կամ չասի իր մտահոգությունը, պատգամավորը կարող է ծնողական խորհուրդներին ուղղություն տա, որ դիմեն Կրթական Խորհրդին և թեմական Խորհրդին և եթե այդ գործերը արդյունք չտվեցին, այն ժամանակ իրավունք ունեն հարցը բերեն Պատգամավորական ժողով:

### Եկեք Ապրիլի 24-ի միջոցառումները չկուսակցականացնենք

Իրանահայ քաղաքական, հասարակական ու մշակութային բոլոր միությունները, շրջանակները, մամուլն ու մյուս միավորները այն համոզմունքին են, որ եղեռնի զոհերի ոգեկոչման միջոցառումները պետք է հեռու լինեն նեղ կուսակցական, միութենական կամ հատվածային լինելուց, սակայն, դժբախտաբար, գործնականում որոշ թերությունների կամ վրիպումների պատճառով մեր համայնքը չի կարողանում միասնական ձևով հանդես գալ այդ ուղղությամբ: Դրա հիմնական պատճառները պետք է բացահայտվեն, քննարկման դրվեն և աշխատանք տարվի, որ յուրաքանչյուրը օգնի պատճառների վերացման գործընթացին: Ստորև ներկայացնում ենք միասնական հանդես չգալու պատճառների մի մասը և լավ կլինի լսել նաև մյուս կարծիքները և առաջարկներ արվի այդ կապակցությամբ:

1- Յուրաքանչյուր տարի ոգեկոչման միջոցառումները անցկացնելու նպատակով թեմի Զայրը թեմի թեմական Խորհրդի կողմից կյանքի է կոչվում կենտրոնական 11 հոգանոց հանձնախումբ, որտեղ հիմնականում նշանակվում են դաշնակցական կամ դաշնակցությանը հարող անհատներ, ավելի լավ կլինի այդ հանձնախումբում նկատի առնվեն նաև այն միություններն ու շրջանակները, որոնք չեն համակրում դաշնակցությանը: Լավ կլինի գոնե «ԲաՖՖի» ՄՍ համալիրից և ԻԱՄՄ-ից պահանջել, որ այդ հանձնախումբի համար ներկայացնեն մեկական ներկայացուցիչներ:

2- Ապրիլի 23-ին Ազգային Առաջնորդարանում տեղի է ունենում ծաղկեմատույցի միջոցառում, որտեղ բոլոր միություններն իրենց միության ներկայացուցիչների միջոցով ծաղիկներ են մատուցում Մեծ Եղեռնի զոհերի

հուշարձանին: Այս ծրագրին մասնակցում են նաև տարբեր միությունների սկաուտները: Չգիտես ում կարգադրությամբ, դաշնակցությանը հարող միությունների սկաուտները և մի շարք երիտասարդներ այդ միջոցառման ընթացքում սկսում են դաշնակցական երգեր երգել, որը անհանգստացնում է ոչ դաշնակցական միությունների սկաուտներին ու երիտասարդներին և անցյալում էլ երբեմն բախումների պատճառ է դարձել ու, վերջիվերջո, նրանք չեն մասնակցում այդ միջոցառմանը, իսկ դաշնակցությունը չի դադարեցնում այդ գործելակերպը և անպայման պնդում է, որ այդ ընթացքում պետք է դաշնակցությունը զովասանքի արժանանա այդ երգերի միջոցով: Թող մեր դաշնակցական ղեկավարները վերանայեն իրենց ոճը և դաշնակցությանը պրոպագանդելու համար չօգտագործեն համընդհանուր համայնքային համազգային միջոցառումը: Ժամանակն է գիտակցենք, որ միջոցառումները լայն մասշտաբով անցկացնելը ավելի շատ օգուտ կբերի մեր հայ ազգին, քան թե՛ նեղ հատվածական շահեր քաղելու տակտիկան, որն անում է դաշնակցությունը:

3- Ամեն տարի Ապրիլի 24-ին երկու տեսակ աֆիշ (փոստեր) է հայտնվում մեր համայնքում, որը միասնականությանը խաթարում է և մի տեսակ մրցակցային մթնոլորտ է ստեղծում և որը մտահոգում է բոլորիս, լավ կլինի այնպես կազմակերպել աշխատանքները, որպեսզի իրանահայության կողմից միայն մի տեսակ աֆիշ փակցվի պատերին: Ի հարկե այդ աֆիշների մեծ մասը փակցվում է հայկական թաղամասերում՝ հատվածական պրոպագանդայի համար, մինչև դեռ այդ գործով զբաղվողները պետք է գիտակցեն, որ ավելի լավ կլինի թեհրանի ոչ հայաբնակ թաղերում ու քաղաքներում, որտեղ հայերին ու հայությանն չեն ճանաչում, կամ էլ Ապրիլ 24 մասին ոչ մի տեղեկություն չունեն աֆիշներ պետք է փակցվեն:

4- Յուրաքանչյուր տարի դաշնակցության («ՅՈՒՄԿ»)՝ի կողմից «Արարատ» կազմակերպության «Վ.Ղարաբեգյան» բասկետբոլի սրահում կազմակերպվում է երեկո, որտեղ հիմնականում որպես դասախոս հրավիրվում է մի դաշնակցական և սա պատճառ է դառնում, որ որոշակի խավ չմասնակցի կամ չհովանավորի նման մի ձեռնարկը և պատճառ է դառնում հենց նույն բովանդակությամբ մի ձեռնարկ, ոչ դաշնակցական դասախոսի ներկայությամբ, անցկացվի մի ուրիշ միությունում:

Եկեք բոլորս վերանայենք այս հարցը: Հիմնականում ԹՅԹ-ի թեմական խորհրդի ու թեմի Առաջնորդ Ս. Սեպուհ Արք. Սարգսյանի պարտականություններից է նաև, որ այս ուղղությամբ միասնականության կոչ անեն, բոլորին կողք կողքի նստեցնեն և քննարկման առիթ ստեղծեն և հոգևոր խորհուրդներով նաև նպաստեն համայնքում միասնականությանը:

**ՐԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌԸ .  
ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՐԱՅԵՑԱԿԱՐԳ  
ՍԵՄԻՆԱՐ ԹԵՐԱՆՈՒՄ**

Մաս 1  
2009 թվի ապրիլի 30-ին առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան ժամը 18-ը թեհրանի «Արարատ» մարզավանի «Շահբազյան» սրահում սեմինար էր կազմակերպել թեհրանի Հայոց թեմի (այսուհետև ԹՅԹ) թեմական խորհուրդը (այսուհետև ԹԽ), նախագահությամբ՝ ԹՅԹ-ի

առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսյանի, ԹԽ-ի ատենապետ դկտ. Արդա Հովհաննիսյանի և դկտ. Լևոն Դավթյանի: Սեմինարին ներկա էր նաև Իրանում ՀՀ դեսպանության խորհրդական Սուրեն Գասպարյանը: Մասնակցում էին իրանահայ համայնքի տարբեր միավորների ներկայացուցիչներ և անհատ ցանկացողներ, որոնց մի մասին հրավիրել էր ԹԽ-ն, իսկ մի մասն էլ ԹԽ-ի հաղորդագրության համաձայն նախապես արձանագրվել էին ազգային առաջնորդարանում: Մասնակիցների թիվը մոտ 90 հոգի էր, սակայն ընդմիջումից հետո մնացին կեսը:

Խեմինարը տեղումական աղոթքով սկսեց և ներկաներին բարի գալուստյան խոսքերով դիմեց ԹՅԹ-ի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսյանը: Սեմինարը առաջածգելու մասին բացատրություններ տվեց ԹԽ-ի ատենապետ դկտ. Արդա Հովհաննիսյանը, նշելով, որ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն է կամեցել, որ մինչև մայիսի 15-ը պետք է քննարկումների արդյունքները փոխանցվեն նախարարություն: Նա նշեց նաև, որ հայեցակարգը քննարկվել է ԹԽ-ում, ապա մի քանի ազգայինների շրջանակում և հետո որոշվել է սեմինար կազմակերպել:

ԹՅԹ-ի ԹԽ-ի կողմից նախապես հանձնարարված թեմաներով զեկույցներ էին պատրաստել հետևյալները՝ 1-«Հայաստան-Սփյուռք հարաբերության համար նախատեսված գործելակերպ»՝ Կիլիկիո Կաթողիկոսության Ազգային ժողովի ԹՅԹ-ի ներկայացուցիչ Դկտ. Լևոն Դավթյան, 2-«Հայաստան-Սփյուռք համագործակցությունը այլ պետությունների հարաբերությամբ»՝ «Ալիք» օրաթերթի խմբագիր պրն. Դերենիկ Մելիքյան: 3-«Մշակութային, կրթական և հոգևոր հարցեր»՝ Թեհրանի ազատ համալսարանի հայագիտության Ֆակուլտետի դեկան և Իրանահայ Ազգային ու Մշակութային Միության նախագահ դկտ. Անդրանիկ Սիմոնյան: 4-«Տնտեսական հարցեր»՝ ԹՅԹ-ի ՊԺ-ի փոխատենապետ պրն. Եմիլ Մնացականյան: 5-«Քաղաքական հարցեր»՝ «Արարատ» ՄՍ կազմակերպության նախկին նախագահ պրն. Հենրիկ Խալոյան:

Նախատեսված ձևով յուրաքանչյուր զեկույցից հետո կես ժամ քննարկում էր լինում, մեկ ժամ ճաշի համար էր նախատեսված իսկ վերջում կես ժամ քննարկում եղավ «հայեցակարգ և իրանահայության հատուկ պայմաններ» թեմայի շուրջ: Ինչպես ընդմիջումի ընթացքում պարզ դարձավ՝ միությունների ներկայացուցիչների 70 տոկոսից ավելին կամ բոլորովին չէին ստացել հայեցակարգը, կամ էլ՝ ստացել էին, բայց քննարկումներ տեղի չէր ունեցել իրենց մոտ: Իսկ ոմանք էլ անկեղծորեն խոստովանեցին, որ դժվարանում էին կարդալ կամ ասում էին, որ կարճ ժամանակամիջոցում անհնարին էր յուրացնել այդքան ծավալուն նյութ: Սա պարզ երևում էր քննարկումների ժամանակ, որովհետև շատ հաճախ ներկաները արձածում էին հայեցակարգին բոլորովին կապ չունեցող նյութեր, մինչև իսկ անդրադառնալով կարտոֆիլ բառի գործածությանն ու մեկնաբանությանը:

Սակայն, այնուամենայնիվ, եղան լուրջ մոտեցումներ և առաջարկներ, որոնց մի մասը կներկայացնենք: Վերջում, երբ ԹԽ-ի ատենապետին խնդրեցինք, որ այն եզրակացություն, որը ներկայացվելու է Սփյուռքի նախարարություն հավաքի անունից տրամադրվի ներկաներին ընթերցելու համար, ստացանք հետևյալ պատասխանը. «Իհարկե, Ձեր իրավունքն է, բայց ժամանակը այնքան կարճ է, որ մենք չենք հասցնի այդ անել, որովհետև մեզանից ուզեցեկ են շուտ ուղարկենք»:

Իսկ այն հարցին, թե՛ հնարավոր չէ, արդյոք, տպագրել իրանահայ մամուլում, որ բոլորը ծանոթանան, ասաց .«Բոլոր իրանահայերը չէ, որ մասնակցել են և եթե տպենք, կարող է ճիշտ չհասկացվի շատերի կողմից»։ Մնում է հուսալ, որ ԹԽ-ն ինքը կծեռնարկի և իրանահայությանը տեղյակ կպահի սեմինարից արված եզրակացության մասին:

## 14-րդ Պատգամավորական Ժողովի Քառամյա գործունեության նախագիծ

Մաս 1

ԹՅԹ-ի Պատգամավորական Ժողովի որոշ անդամների և դիվանի կողմից ներկայացվել էին մի շարք առաջարկներ ՊԺ-ի առաջիկա չորս տարվա աշխատանքների համար, ՊԺ-ի դիվանն էլ ամփոփելով այն ներկայացրել է քննարկման որպես նախագիծ: Այդ նախագիծը ներկայացնում ենք մեր համայնքով հետաքրքրվող անդամներին, որպեսզի նրանք՝ նախ տեղյակ լինեն և, ցանկության դեպքում, կարողանան իրենց կարծիքներն ու առաջարկները ներկայացնեն ՊԺ-ի հարգելի դիվանին կամ որևէ պատգամավորի:

### Նպատակ

1- Հաստատելով իրանահայ գաղութի յուրահատուկ արժեքը և դերը համահայկական ազգային ընդհանուր շահերի հետապնդման ուղղությամբ, գաղութի թվային աճի ապահովումը և արտագաղթի հոսքի կասեցումը համարում է առաջնահերթ նպատակ:

2- Թեմի ազգային կառույցների դրվածքը վերանայելով՝ համապատասխանեցնել համայնքի պահանջների հետ, բարձրացնել նրանց կարողունակությունը՝ համայնքի ընդհանուր դերակատարության մակարդակը համազգային շահերի հետապնդման ուղղությամբ բարձրացնելու և իրանահայ համայնքի բարօրությանը լավագույնս ծառայեցնելու համար:

3- Հայաստան-Սփյուռք համագործակցության ուղղությամբ ձևավորվող համահայկական ծրագրերի շրջագծում, ապահովել իրանահայ գաղութի դերը, գաղութի լավագույն կարողունակությունը ի գործ դնելու համար:

Նպատակներին հասնելու ուղղությամբ գործադրական ծրագրերի կազմության համար պետք է ծավալել լայն ուսումնասիրություններ տարբեր բնագավառներում: Պատգամավորական Ժողովը կյանքի է կոչելու հանձնաժողովներ, որոնք գործադիր մարմինների անդամների մասնակցությամբ ու նաև խորհրդակցելով համայնքիս լավագույն մասնագետների հետ, ուսումնասիրության նյութ են դարձնելու համայնքիս ներկա իրավիճակը յուրաքանչյուր բնագավառում, առաջարկելու են կարճատև և երկարատև նպատակներ, ճշտելու են առաջնահերթությունները և ՊԺ-ի հաստատումը ստանալուց հետո հանձնելու են գործադիր մարմիններին մանրամասն գործադրական ծրագրերի մշակման և իրագործման համար:

Ընդհանուր նպատակների իրագործման ուղղությամբ, ստորև ներկայացնում ենք յուրաքանչյուր բնագավառում նախնական քննարկումների արդյունքում պարզված նպատակային առաջնահերթություն համարվող խնդիրները: Հանձնաժողովների գործունեության արդյունքում հետզհետե պետք է ամբողջացնել ոռկա

խնդիրների ցանկը, և ուսումնասիրությունների միջոցով հանգել հստակ եզրակացությունների:

### Տնտեսական

Տնտեսական բնագավառում նպատակային հիմնական խնդիրը Թեմի տնտեսական ամենաբարձր հնարավոր պայմանների առաջացնելն է: Այս ուղղությամբ պետք է կատարել հետևյալ ուսումնասիրությունները՝

1- Եկամուտների բարձրացման համար, Թեմի դրամական և կալվածային հարստությունների բոլոր հնարավորությունների տվյալները նկատի առնելով, ուսումնասիրել նրանց ծահագործման ձևերը և առաջացնել եկամտաբեր այնպիսի ձեռնարկություններ, որոնց եկամուտը համապատասխան կլինի ներդրում կատարած կապիտալի հետ:

2- Ուսումնասիրել ընթացիկ ծախսերի որպեսիությունը բոլոր բնագավառներում և փորձել կատարվող ծախսերի օպտիմալացման համար գտնել լուծումներ:

### Կրթական

Կրթական բնագավառում առաջնահերթություն են համարվում հետևյալ խնդիրները՝

1-Ուսումնասիրել դպրոցների վերադասավորման հանգրվային ծրագրի կազմության շուրջ, ըստ առաջիկա տարիներում նախատեսվող աշակերտության թվաքանակի:

2- Միջնակարգ դպրոցներում կրթական մակարդակի բարձրացման և պարսկական դպրոցներ հաճախող աշակերտությանը ներգրավելու համար կատարել լայն ուսումնասիրություններ:

3- Մշակութային դպրոց-հաստատություն ունենալու կապակցությամբ ուսումնասիրություն կատարել:

## ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՆԱՄԱԿ Հայ ճարտարապետների և ճարտարագետների Միության պաշտոնաթերթ

Արդեն վաղուց է, որ Թեհրանում լույս է տեսնում Հայ ճարտարապետների ու ճարտարագետների Միության պաշտոնաթերթ՝ «Տեղեկատու-Նամակ» պարբերականը: Մինչ այժմ լույս է տեսել 230 համար, վերջինը մարտ ամսի համարն է, որտեղ թերթը իր մեջ պարունակում է հետևյալ նյութերը՝ «Շնորհավոր գարնանամուտ», ՀԳՇ Միության 23-ամյակի հանդիսությունը և Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Ս. Սեպուհ Սարգսյանի նամակը այդ կապակցությամբ, տոնակատարությանը կից ցուցահանդեսի և մասնակից անդամների, Հայաստանում անցկացված Համահայկական ճարտարապետական համագումարի մասին և այրն. Լևոն Ահարոնյանի «Փոթորկոտ կյանքիս օրերը» գրքի մասին տեղեկություն:

## «Իրան-Հայաստան» բարեկամության ընկերությունը Գրքի ցուցահանդեսում

Այս տարի առաջին անգամ «Իրան-Հայաստան» բարեկամության ընկերությունն առանձին տաղավարով իր մասնակցությունը բերեց Իրանում կազմակերպվող ամենամյա Գրքի միջազգային ցուցահանդեսում: Իր գործառույթների շրջանակներում համապատասխան բրոշյուրների և գրքերի ցուցադրմամբ, որոնք ներկայացնում էին Հայաստանի տնտեսությունը,



ճարտարապետությունը, մշակույթն ու տուրիզմը, ընկերությունը ցուցահանդեսի ընթացքում կարողացավ հետաքրքրություն առաջացնել բազմաթիվ մարդկանց մեջ, որոնք սիրով արձանագրվում էին տեղում ընկերությանն անդամակցելու համար: Ցուցահանդեսի ընթացքում ամենաուշագրավը մայիսի 12-ին ՀՀ դեսպան պարոն Կարեն Նազարյանի այցելությունն էր ընկերության տաղավար: Հանդիպելով ընկերության տարբեր բաժինների պատասխանատուների հետ Նազարյանն իր գոհունակությունը հայտնեց նման կարևոր միջոցառման շրջանակներում Հայաստանն ու հայ ժողովուրդը ներկայացնող ևս մեկ հայկական տաղավար ձևավորելու համար: Կարճատև խոսքերի փոխանակման ընթացքում երկուստեք հույս հայտնեցին, որ նման միջոցառումներ անպայման կնպաստեն հայ-իրանական ժողովուրդների միմյանց ավելի մոտիկից ճանաչելու և Իրան-Հայաստան փոխհարաբերությունների առավել զարգացմանը: Ձրույցն ավարտելուց հետո ընկերության պատասխանատուների ուղեկցությամբ դեսպանատան պատվիրակությունը շարունակեց իր շրջայցը գրքերի աշխարհում:

Ինչպես գիտեք ամեն տարի այդ ցուցահանդեսին հայոց գիրն ու գրականությունն առավել ծավալուն ներկայացվել են Հայաստանի և Իրանում «Նայիրի» հրատարակչության տաղավարներում: Անշուշտ նման հանդիպումներն արժանի են ուշադրության, բայց երանի բարձրաստիճան պատվիրակություններից բացի ցուցահանդեսի հայկական տաղավարներ այցելելին նաև հայկական մշակութասեր ընտանիքների պատվիրակությունները՝ հայկական հիասքանչ գրքերի վզերը ծուռ չթողնելու համար:

*Լրագրեց «Իրան-Հայաստան»  
ընկերության Հասարակական կապի  
բաժնի անդամ Գայան Արզարյանը*

**Իրանահայերը իրենց պահանջներն ու  
առաջարկները կներկայացնեն  
Իրանի ԻՇ Նախագահական թեկնածուներին  
Խորհրդակցություն Թեհրանի Ազգային  
Առաջնորդարանում**

2009 թվականի մայիսի 19-ին Թեհրանի Ազգային Առաջնորդարանում ԹՀԹ-ի թեմական Խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում, որին մասնակցում էին Թեհրանի հասարակական միավորների ներկայացուցիչները և որտեղ քննարկվեցին իրանահայ համայնքին հուզող այն հարցերը, որոնք առաջիկայում կներկայացվեն Իրանի ԻՇ Նախագահական ընտրություններում մրցակցող 4 թեկնածուներին կամ նրանց ներկայացուցիչներին: Հանդիպման սկզբում ԹԽ-ի նախագահ ղկտ. Այիդա Հովհաննիսյանը բարի գալուստ մաղթելուց հետո տեղեկացրեց, որ նման քննարկում անցկացնելու ցանկություն էին հայտնել մեր համայնքի հարակալական-ազգային գործիչ ու բարերար պարոն. Լևոն Ահարոնյանը, մի խումբ պատգամավորներ ու ազգայիններ: Նա ներկայացրեց մի շարք հարցերի փաթեթ, որը պատրաստել էր թեմական Խորհուրդը: Մասնակիցները այդ հարցերը քննարկելուց հետո անդրադարձան նաև մի շարք այլ հարցերի ևս, որոնք գրանցվեցին թեմական Խորհրդի կողմից:

Հանդիպմանը ներկա էին Իրանի Իսլամական Հանրապետության Խորհրդարանում իրանահայ համայնքի երկու պատգամավորները պարոն. Գևորգ Վարդանյան և պարոն. Ռոբերտ Բեգլարյանը: Նրանք նաև իրենց հերթին անդրադարձան մի շարք հարցերի ու դրանց լուծման եղանակներին:

Անցյալ շրջանների ընտրությունների նման, բոլորը այն համոզմունքին էին, որ մեր Ազգային Իշխանությունը առանձին մի թեկնածուի չի հովանավորելու, սակայն առիթ է ստեղծելու բոլոր չորս թեկնածուների համար հանդիպելու իրանահայ համայնքի հետ ու ներկայացնելու իրենց ծրագրերը, որի ընթացքում ներկայացվելու են նաև մեր պահանջներն ու խնդրանքները:

Պրոն. Լևոն Ահարոնյանը կարևորեց այն հարցը, որ մենք այս երկրի լիիրավ քաղաքացին ենք ու մասնակից ենք եղել ու մասնակից ենք երկրի բոլոր անցուդարձերին և մեր իրավունքն է պահանջատեր լինենք ու հստակ ձևով ներկայացնենք մեր խոշոր և հիմնական հարցերը և ոչ թե մանր մուկեր հարցեր, որոնք կարող են լուծվում ստանալ պատգամավորների կամ Ազգային Իշխանության ջանքերի շնորհիվ: Նման հարցերից կարելի է թվարկել պետության կողմից մեծ կապիտալի հատկացումները իրանահայությանը՝ տարբեր ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

Վերջում որոշվեց, որ թեմական Խորհուրդը այս խորհրդակցության հանդիպման եզրակացությունների հիման վրա պատրաստի գրավոր հարցերի փաթեթ և ուսումնասիրի դրանց ներկայացնելու ճիշտ մեխանիզմը, և կազմակերպի հանդիպում նախագահական թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների հետ: Հարկ է նշել, որ ԻԻՀ նախագահական ընտրությունները տեղի կունենան մոտ մեկ ամիս հետո:

ԹՀԹ-ի Պատգամավորական ժողովի անդամ  
Ղկտ. Ռուբիկ Սարգսյան

**Շարժազրույց պատմական գիտությունների  
թեկնածու, «Միտք» վերլուծական կենտրոնի  
Նախագահ Էդուարդ  
Աբրահամյանի հետ**

1-Նախ  
կալություն  
գրույցին  
մասնակ-  
ցության  
համար:  
Խնդրում  
ենք  
ներկայացնել  
կազմակերպությանը:



«Միտք» վերլուծական կենտրոնն երիտասարդական կազմա-կերպություն է, որն հիմնադրվել է 2005 թվականի սկզբին: Ի սկզբանե այն նպատակ էր հետապնդում աջակցել հասարակական գիտություն-ներով զբաղվող երիտասարդների մասնագիտական ունակությունների զարգացմանը, ինչպես նաև մասնակից դարձնել Հայաստանի երիտասարդ սերնդին երկրի հասարակական և քաղաքական զարգացումներին:

Ներկայումս «Միտք» վերլուծական կենտրոնը բավականին ընդլայնել է իր գործունեությունը: Կազմակերպության անդամների թվաքանակի աճին զուգընթաց ավելացել են նաև խնդիրներն ու նպատակները: Միտքե կենտրոնում այսօր գործում են զանազան հետազոտական խմբեր, Նախագահել լրատվական գործակալությունը, ինչպես նաև քաղաքագիտական ուղղվածության դասընթացների



դպրոցներ: Բացի այդ կազմակերպվում են տարբեր միջազգային գիտաժողովներ և քննարկումներ:

2- Ի՞նչ առաքելությամբ և ինչքան ժամանակով գտնվեցիք Իրանում:

Իրանի Իսլամական Հանրապետություն ես ժամանեցի Հայաստանում այդ երկրի դեսպանատան հրավերով: Նպատակն Իրանի արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանսին մասնակցությունն էր: Իրանում ես անցկացրեցի շուրջ մեկ շաբաթ:

3- Ի՞նչպիսի տպավորություն ստացաք Իրանից և այդ միջոցառումից, որ դուք մասնակցում էիք:

Իրանը աշխարհի հինավուրց և ամենահարուստ քաղաքակրթություններից մեկի ժառանգորդն է: Չնայած կրոնական տարբերություններին՝ այն հանդիսանում է Հայաստանի գրեթե միակ քաղաքական դաշնակիցը մեր տարածաշրջանում: Հաշվի առնելով Հայաստանի և Իրանի պատմական հարուստ անցյալը՝ մենք պարտավոր ենք ավելի լավ ճանաչել միմյանց: Եվ բարձր կարծիքը Իրանի հանդեպ ինձ մոտ ձևավորվել էր այդ երկրի այցելելուց շատ ավելի վաղ: Ինձ համար շատ հաճելի էր, որ Իրանում արդարացան այդ երկրի մասին իմ բոլոր պատկերացումները: Ցանկանում եմ նաև առանձին նշել իրանցիների հյուրասիրությունն ու բարիացականությունը:

4- Ձեր կազմակերպությանը ովքեր են մաս կազմում և ինչ սահմանափակումներ ունեն մասնակցության համար:

Ես արդեն նշեցի, որ, Միտքե կենտրոնը երիտասարդական կազմակերպություն է: Հետևաբար անդամների բացարձակ մեծամասնությունը երիտասարդներ են: Սակայն մենք չունենք տարիքային կամ այլ սահմանափակումները: Կազմակերպության անդամ կարող է դառնալ մեր կանոնադրությունն ընդունող ցանկացած քաղաքացի:

5- Արդյոք հատուկ քաղաքական ուղղություն կամ գիծ է հետապնդում Ձեր կազմակերպությունը:

Այո: Հայրենասիրությունն ու պետականամետությունն է մեր քաղաքական ուղղվածությունը: Միտքե կենտրոնի գործունեության ելակետն ու նպատակը հզոր Հայաստանն է:

6- Ինչպե՞ս եք հոգում Ձեր կազմակերպության Ֆինանսական հարցերը:

Բացառապես անդամավճարների շնորհիվ:

7- Ի՞նչպիսի հարաբերությունների մեջ եք իշխանամետ և ընդդիմադիր ուժերի հետ:

Մենք փորձում ենք խուսափել ներքաղաքական գործընթացներին ներքաշվելուց: Եվ, չնայած դրան, մեր նպատակներին հասնելու համար հաճախ համագործակցում ենք Հայաստանում գործող ամենատարբեր քաղաքական ուժերի հետ: Սակայն այդ համագործակցությունը միշտ հիմնված է լինում բացառապես պետական շահերին: Եթե Հայաստանի իշխանությունների կամ ընդդիմության կողմից առաջարկվող ծրագրերը չեն հակասում մեր ըմբռնումներին, ապա մենք պատրաստ ենք համագործակցել նրանց հետ:

8- Ի՞նչպիսին եք տեսնում Հայաստանի և Արցախի ապագան:

Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն այսօր բռնել են կայուն զարգացման ուղին: Հայկական բանակը Կովկասում ամենամարտունակ բանակն է: Մենք ունենք բարեկեցիկ ապագա ունենալու բոլոր նախադրյալները: Պարզապես պետք է աշխատել ի շահ պետության: Ցավոք սրտի, հայ ժողովուրդը համախմբում է իր ուժերը միայն դժվար պահերին, երբ կարծես թե գտնվում է անելանելի վիճակում: Այդպես էր Սարդարապատում և այդպես էր Արցախում: Սակայն արդեն եկել է ժամանակը որպեսզի դասեր քաղենք մեր պատմությունից և չթուլալատենք, որպեսզի հակառակորդը նորից խափանի հանգիստը մեր ընտանիքներում: Իսկ դրա համար պետք է լինել ուժեղ և խելամիտ:

9- Քանի որ հետաքրքրված եք նաև սփյուռքով, ինչքանով եք ծանոթ իրանահայ համայնքին և արդյո՞ք հասցրեցիք ծանոթանալ համայնքի հետ:

Հայաստանի բուհերում սովորում են Իրանից եկած շատ հայ ուսանողներ: Նրանցից շատերն էլ հաճախ այցելում են Միտքե կենտրոն: Այնպես որ հեռակա կարգով մենք լավ ենք ծանոթ Իրանում ապրող հայ բնակչության խնդիրներին: Սակայն դրա հետ միասին պետք է նշեմ, որ սեփական աչքով իրականությունը տեսնելն առավել լավ պատկերացում է տալիս իրավիճակի մասին: Իրանում ես հանդիպեցի հայ համայնքի ներկայացուցիչների հետ և հուսով եմ, որ այդ հանդիպումները հետագայում կվերածվեն արդյունավետ համագործակցության:

10- Վրաստանի հայերի ու Ջավախքի հարցերի նկատմամբ ինչպիսի մոտեցումներ ունե՞ք:

Լավ է, որ Ձեր հարցում Դուք տարբերակեցիք Վրաստանի հայերին ընդհանրապես ջավախքահայերից: Հայկական Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հայությունն ապրում է իր պատմական հայրենիքում: Այն դեպքում, երբ թիֆլիսահայությունն, օրինակ, հանդիսանում է հայկական սփյուռքի դասական օրինակ:

Ջավախքն այսօր իսկապես ունի մի շարք հարցեր, որոնք ունեն շուտափույթ լուծման կարիք: Այլապես իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից, ինչն իսկական աղետ կդառնա ինչպես Վրաստանի, այնպես էլ հայկական այդ գավառում ապրող հայ բնակչության համար: Ցավոք սրտի հայկական պետականությունը աչք է փակում պաշտոնական Ջավախքում թբիլիսիի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության վրա: Դա պայմանավորված է թերևս այն հանգամանքով, որ Վրաստանի տարածքով են անցնում Հայաստանի առևտրական ճանապարհների բացարձակ մեծամասնությունը: Սակայն դրա հետ միասին չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ պատմական Հայաստանի մաս կազմելուց զատ Ջավախքն այսօր հանդիսանում է ներկայիս Հայաստանի կյանքի ճանապարհը: Մեր պետականությունն ուղղակի պարտավոր է սատար կանգնել տեղի հայությանը և օժանդակել նրանց խնդիրների արդարացի լուծմանը: Դա բխում է նաև Վրաստանի Հանրապետության կենսական շահերից, քանի որ այդ պետությունն իր գոյությունը կարողանում է պահպանել բացառապես հայերի բարի կամքի շնորհիվ:

Ջավախքի խնդրում մեր դիրքորոշումը պարզ է. այստեղի հայության խնդիրները ունեն քաղաքական դրդապատճառներ: Այն չափով, որչափ այսօր Վրաստանը ներկայացված է Ջավախքում, հանդիսանալու է Ջավախքի հիմնախնդիրների մշտական առկայության և վերջիններիս խորացման պատճառ: Ջավախքը պետք է հնարավորություն ունենա բոլոր ուղղություններով զարգանալու միմիայն

ինքնուրույն հնարավորություն: Այսինքն՝ Ջավախքի հարցի լուծումը կայանում է վերջինիս՝ որպես ինքնավար վարչամիավոր կազմավորվելու և այդ հիմքի վրա թիֆլիսի հետ հարաբերությունները հաստատելու մեջ: Այս ուղղությամբ աշխատանքներ տանելու սկիզբը պետք է հանդիսանա Ջավախքի վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի մշակումը, որի շուրջ կհամախմբվեն խնդրո առարկա տարածաշրջանով հետաքրքրվող շրջանակները:

11- Ի՞նչ կարծիք ունեք ՀՀ Սփյուռքի նախարարության գործունեության և ծրագրերի մասին, արդյոք որևէ համագործակցություն ունեք նրանց հետ:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունները վաղուց վերանայելու անհրաժեշտություն կար: Կարծում եմ, որ հայության բաժանված երկու հատվածների համագործակցությունը սխալ հիմքի վրա էր դրված: Ցայժմ Հայաստանի բնակչության կողմից Սփյուռքը դիտարկվում էր իբրև ֆինանսական օգնության աղբյուր: Եվ շատ քիչ ուշադրություն էր դարձվում աշխարհասփյուռ հայ ժողովրդի կենսական խնդիրների վրա: Այսօր, կարծես, թե փոխվում է Սփյուռքի մասին Հայաստանի ընկալումը: Վերջապես մենք գիտակցեցինք, որ Սփյուռքը մեր ուժը լինելուց բացի նաև մեր թուլությունն է: Հետևաբար անհրաժեշտ է ավելի լուրջ վերաբերվել աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերի հոգսերին:

Սփյուռքի նախարարությունը տակավին ձևավորման փուլում է: Ուստի նրա գործունեությանը որևէ գնահատականներ տալը տակավին վաղ է: Այդ գերատեսչության աշխատակիցները բավական ակտիվ հարաբերվում են Հայաստանի քաղաքագիտական և փորձագիտական շրջանակների հետ: Հույսով եմ, որ նրանց գործունեությունը կնպաստի Հայաստան-Սփյուռք առավել արդյունավետ հարաբերությունների ձևավորմանը:

12- Տարածաշրջանային հարցերում ինչպե՞ս եք գնահատում Իրանի Իսլամական Հանրապետության դիրքը և տեղը:

Մեր տարածաշրջանը բավական անհանգիստ է: Այստեղ բախվում են տարբեր քաղաքակրթություններ, ինչը մշտական պատերազմների առիթ է: Իհարկե, նման իրավիճակը չի կարող բխել հայերի և իրանցիների պես խաղաղասեր ժողովուրդների շահերից: Ուստի Իրանի արտաքին քաղաքականությունն աշխատում է կայունություն ստեղծել Հարավային Կովկասում: Այս իմաստով Իրանը խաղում է ավելի խաղաղարարի և հաշտեցնողի դեր:

13- Ի՞նչպիսի գործնական համագործակցություններ եք կարող ունենալ իրանահայ հասարակական ու քաղաքական միավորների հետ:

Կարծում եմ, որ համագործակցության դաշտը բավական լայն է: Իրանահայ համայնքը բավական լավ դիրքեր ունի Իրանում: Սակայն, չնայած այդ հանգամանքին, այնտեղ նույնպես կան հայապահպանման և այլ խնդիրներ, որոնք ուշադրության կարիք են զգում: Խոսքը նախ և առաջ վերաբերվում է կրթական, մշակութային և կրոնական ոլորտներին: Այդ առումով իրանահայերի համագործակցությունը նշված ոլորտներում գործող հայաստանյան կազմակերպությունների հետ կարող է բավական շահավետ լինել երկու կողմերի համար:

Դրա հետ միասին, կարծում եմ, որ ամբողջ աշխարհի հայության գլխավոր խնդիրը պետք է լինի Մայր Հայրենիքի հզորացումն ու ծաղկումը: Ուստի մենք պետք է բոլորս միասին փորձենք լուծել այդ կարևորագույն խնդիրը: Իսկ դրա համար անհրաժեշտ է համատեղ ուժերով մշակել Հայաստանի հզորացման քաղաքականությունը: Խնդիր, որն

անհնար է լուծել առանց քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային, կրոնական, հասարակական, գիտական և այլ ոլորտներում համագործակցության:

## Սոհեր

### Մեր անցած ճամբան

#### գ- Մասշեղ Սուլեյման – Մաս դ

*Թ. Ղարախանյան Միքակցի*

Պատմում եմ թե “Սեյեղ Քրամվիլ”-ը իր ծածկանունը ստացել է պարսկաստանի Նոր Ջուղայի նահանգին կից, ԼՈՐԵՍՏԱՆ՝ նահանգի Խոռան Աբադ քաղաքի լեռնային շրջանում իր երիտասարդ մասնագետ շոֆերության ժամանակ երբ ճամբի գողերը իր բեռնատարի գլխից բեռը գողանում և երբ աշխշտում է դիմադրել, սակայն իրեն կալանում և իրենց հետ գերի են տանում:

Ասեմք որ բեռնատար մեքենաները շատ դանդաղորեն էին բարձրանում այդ լեռնային ոլոր-մոլոր ճանապարհներից, որ մինչև 1960-ական թվականներին դեռ ասֆալթապատ չէին և գրեթե այդ ժամանակվայ բեռնատարային տրանսպորտի շոֆերները ամենը Հայ էին և ամեն բեռնատարի շոֆեր ուներ իր հայ աշակերտը: Բեռնատար մեքենայի աշակերտի մեծագույն դերերից այն էր, որ բեռնատար մեքենան իր ծանր բեռով զառիվեր բարձրանալու ժամանակ այնքան դանդաղ էր բարձրանում, որ աշակերտը մի կտոր ծառից կտրած արգելող էր որ բեռնատարը հենց շունչը կտրելու ժամանակ արագ գցում էր հետևի անիվի տակ, որ արգելի բեռնատարը հետ-հետ գնալուց. Էլի երբ բեռնատարը փոխանցում էր անում (Change gear) և ճանապարհ էր ընկնում էլի աշակերտը փայտի կտորը դուրս էր քաշում, վերցնում և գրեթե բեռնատարի հետ այնքան քայլում էր մինչև բեռնատարը հասնում էր լեռների գլուխը: Շոֆերությունն ու աշակերտությունը, այն ժամանակ Պարսկաստանի վստահելի և ապահով արհեստներից էր համարվում, իհարկ է իր գործի ռիսկերով: Այս ճանապարհները տարիներ հայ շոֆեր-աշակերտների առօրյա կյանքի մասն էր դարձել, օրինակի համար ամենից հայտնի հերոս ու քաջ շոֆերներից էին ՂՈՒԼ ԿԱՐՈՆ-ն որ տուն ու տեղը Նոր Ջուղա էր, ինքը իր բեռնատարը ուներ և Պարսկաստանի նավահանգստներից Աբադան, Խոռանշահր, Սիվազ քաղաքներից բեռ էր տեղափոխում Թեհրան: Օտար հայ շոֆերների պատմածի համաձայն, քշելու ժամանակ ամեն գիշեր ժամը 11-ին պիտի Հայաստանի ռադիոն լսեր: Մոտիկ բարեկամները լսել էին որ ՂՈՒԼ ԿԱՐՈՆ ասում էր՝ «Երեւանն է խոսում, Երեւանն է խոսում-ը լսելիս ջիգյարս հովանում է»: Պարսկաստանում, Սովետական օրերին, Հայրենիքի հետ միակ հոգեկան կապի միջոցը ամեն օրյա ռադիոի հաղորդումն էին և նամակներն էլ ամիսներ էր տևում: Մեր շոֆեր-աշակերտ արհեստավոր հայությունը այնքան հոգով-սրտով սիրեց իրենց անցնող լեռնաշխարհը և ճանապարհները որ մտան հայի ստրի մեջ որ սկսեցին երգ ու պոեզիա հորինել և հայերեն, պարսկերեն և թուրքերեն բերն-է-բերան երգեցին իրենց ամենօրեայ գործի ու կյանքի մասին եւ միացան Պարսկաստանի այդ ժամանակվա մտավորականներին, արհեստաւորներին, աշուղներին, քաջերին, հերոսներին, իմաստուններին: Ավաղ էլի ավաղ որ մշտական այս ամենից ծանօթ «հայ գաղթը» տեղից տեղ առիթ չտուց որ այսքան բերնբերան մտքի ստեղծագործությունը գրի առնվի, բայց մնաց գոնե մի սերունդի մարդկանց հուշերի մեջ: Այսքան գոնե ինչնք որ Թեհրանում ապրող հավանաբար շատերին ծանոթ սիրելի ու հարգելի «Փերիայի գավառից» Պողոսը իր գեղեցիկ մշտագալար մագերով և առողջ բեղերով, թամաղայի

բնածին ընդունակություններ ունի և հարսանիքների հարգալի թամադա է, իր ջախելության ժամանակ ստեղծած ու հորինած ՇՈՖԵՐՆԵՐԻ երգերը Պարսկաստանի հենց այդ լեռնային ճանապարհների մասին: Օրինակ այդ դժվար լեռնային ճանապարհների տասնեակ պտույտների մեկի անունն էր Չալան-Չուլանի-ի լեռնային պտույտը: Եւ մեր սիրելի Պօղոսի հորինած երգը այսպէս է սկսում իր բեռնատարը քշելու ժամանակ...

«Շոֆեր տղեն մաշին է քշում,  
Ռուլը ձեռին միշտ է պտտում,  
Սար բալեքին դանդա է փոխում,  
գլխավերին թռնոզն է բռնում,  
քաշի քաշի քաշի լենթերը ցլովեց,  
Կայնի կայնի կայնի թորմզը կտրվեց,  
6000 թունան վաքսալս փչացեց

...  
Չալան-Չուլանի փչերը պտտվեց,  
և այլն »

Հենց այս մեր սիրելի նույն Պողոսն էր որ Մասչեղ Սուլեյմանի Միհրդադ դարոցի առաջին երգչախմբի երանելի և երագային ու առասպելական երգի փորձի ժամանակ մայստրո և ուսուցիչ Պարոն Չորա Բժշկյանի ղեկավարությամբ սկսեց ծայնը փորձել երգելով՝

«Դուն եմ գլխեն իմաստունիս...  
Խելդ հիմարին բաբ մի անի...»

Ոչ մի տեղ այս տողերը չի գրւած ոչ էլ Չարմահալի Աշուղ ՀԱՐՈՒՆԻ օրինակ այս տողերը.

« զարմանում եմ ես աշխարհից,  
թե ես ինչ աշխարհ է դառել,  
Քուլուխը չի վախնում քարից,  
Աղվեսը Սարդար է եղել »

...  
“Սեյեղ Քրամվիլ”-ի ծածկանունի մասին պատմությունը այսպէս է հասել մեր սերնդին, որ “Սեյեղ Քրամվիլ”-ը հենց այդ կոչւած ‘Չալան Չուլան’ Լեռնաշղթայից բեռնատարը քշելիս, ճանապարհին գողերը հին ժամանակների Կարավան Կտրողների նման մեքենան կողոպտել եւ իրեն գերի են վերցրել: Եւ ինքը իր հայրությունը ծածկելու համար, իմաստությամբ եւ ճարպկությամբ գողերին ասել է թէ ես «մարգարէի եւ ԱՂԱ-ների տոհմից եմ». Երբ հարցրել են թէ «ԱՂԱ-ների որ մեկ տոհմից ես», նորից կայծակի ճարպկությամբ պատասխանել է «ՔՐԱՄՎԻԼ» հիշելով մեքենայի մի դժվար կտորներից “Crown wheel” մասը եւ իր հարցաքննողները երբ շվարած են մնացել այս նոր ԱՂԱ տոհմից իր կյանքը փրկել են եւ իբրև մեծ ԱՂԱ-յի տոհմից իրենից խնդրել են որ իրենց շրջանի ծերուկ իմաստուների խորհրդական լինի: Եւ այդպէս իր կյանքը փրկելով որևէ ժամանակից հետո վերջապէս հարմար առիթից օգտվելով հերոսաբար իրեն փրկել է այնտեղից եւ հասել Մասչեղ Սուլեյման և աշխատանքի անցել Նաֆտի Ընկերության մեջ, բայց և այնպէս պահել է իր հերոսական ծածկանունը: Մենք փոքր ու մեծս խոռը հարգանքով և սրտի սիրով դեռ մինչև օրս հիշում ենք մեր սերնդի հոգին սնող և ազգային առասպելների ստեղծագործ ‘ՊԱՏՄԻՉ’-ի այդ պատմական սքանչելի ծածկանունը:

1998-ին Կանադայի Թորոնթո քաղաքում, ընկերային հանդիպումի ընթացքում մեր հարգարժան պատմիչ Պարոն ԿԱՐԱՊԵՏ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻ գովքը գովեցի մեր սիրելի համագյուղացի պարոն ԿԱՐՈՒ ՄԱՐՏԻՆ-ին: ԿԱՐՈՒ-ն իր Հարգելի հորեղբայր Սարտիրոս Քեչիշյանի ջանքերով պատանի տարիքին մեր գյուղից մեկնել էր Հնդկաստան

կրթվելու և Կալկաթայում կրթվելուց հետո վարձվել էր Հնդկաստանում հիմնադրված Անգլիական ԴԱՐՁԼԻՆԳ թեյի ընկերության մեջ և հասել էր տնօրենի պաշտոնի: Տարիներ պաշտոնավարալուց հետո հաստատվել էր Թորոնթոյում եւ անդամ էր թէ Թորոնթոյի Սուրբ Երրորդության Եկեղեցու ծխականի և թէ Կարդանանց Ասպետների միությանը: ԿԱՐՈՒ հետ մեր այդ խոսակցությունը այնքան ոգևորիչ և ազգային էր որ՝ ծրագրվեց մեր Սիրելի ԿԱՐՈՒ ՄԱՐՏԻՆ-ը Պարսկաստան գնա եւ այդ հարուստ պատմիչի բեղմնավոր գործնեությունը գրի առնի որ այդքան մեծ դերակարություն ունեցավ մեր ժողովրդի ամենագուրկ դասակարգի համար այդ անցողական դարեշրջանում և ծանոթացնելով մեր ժողովրդին հարգանքի տուրք մատուցվի նրան և իր տիկնոջ ու զավակներին: Ինչպէս ասվում է ... ցավոք պիտի ասենք որ չստացվեց և ծրագիրը կիսատ մնաց մեր հարագատ ընկերոջ ազգամկեր բազմատիվ ծրագրների բերումով:

Ազգանվեր պարոն ԿԱՐՈՒ ՄԱՐՏԻՆ Քեչիշյանը-ը հայրենասեր լինելով նույնիսկ սովետական տարիներին հաճախ այցելում էր Հայաստան և ամեն անգամ հանդիպում երջանակահիշատակ Վազգեն Կաթողիկոսին Մայր ԱՅՈՒՌ Սուրբ Եջմիածնում և տարիներ մեծ քանակությամբ անվճար թեյ եւ ուղարկում էջմիածին իբրև նվեր Իրան-Հնդկաստանի Թեմի կողմից առանց հայտարարության և ինքնասիրության: Մեր սիրելի Կարոի նվիրումը ինչքան նման է Կանադաում Թորոնթո քաղաքում հիմնված Հայաստանի Համահայկական Հիմնադրամի ազգանվեր աշխատանքներին որ Թորոնթոյի փոքրաթիվ հայության տարեկան դրամահավաքից Արցախում ճանապարհ, դպրոց, զագանուղ է կառույցում և հայտարարում է որ բոլոր Թորոնթոյի հայերի կողմից է դրամ հավաքել: Այսպէս՝ գլուխ ենք խորարհում «ԱԶԳԻ ՀԱՍԱՐ ՔԱՐԸ-ՔԱՐԻ ՎՐԱՅ ԴՆՈՂՆԵՐԻՆ» որ իրենց ԳՈՐԾՈՎ են հիշվում հավիտյան:

Կարո Սարտին Քեչիշյանը ծայրագույն մեծ դեր ունացավ Իրան-Հնդկաստանի թեմի գործնեությանը այնպէս որ Կանադայի Թորոնթո քաղաքում անձիս պատմածի համաձայն , ինքը Իրան-Հնդկաստանի հայկական դարոցական եւ եկեղեցական մարմնի պատասխանատուներից էր եւ Հնդկաստանի Եկեղեցական Թեմը **անբաժան** պահեց Ամենայն Հայոց Մայր ԱՅՈՒՌ Սուրբ Եջմածնին **կից** եւ ապահովեց “HONG KONG”-ից ստացված տարեկան հազարավոր դոլարների մշտական շահույթը, որ 18-րդ դարից Հնդկաստանի Հայ Ազգականների պահ դրած Կապիտալ անձեռամխելի դրամազուխն է, եւ մշտապէս ուղարկվի Հնդկաստանի Հայկական Դպրոց-Եկեղեցական գանձանակը եւ այսպէս մնա Ամենայն Հայոց Սուրբ Եջմածնի հովանավորության տակ:

Վկայում ենք այստեղ, Ի հարգանք մեր ազգանվեր Կարո Սարտին Քեչիշյանի, պիտի հիշվի որ Թորոնթոյի Սուրբ Երրորդության Եկեղեցու ներքնահարկի հսկա սրահը, Կարո-ի “Lobbying”-ի ջանքերով Թորոնթոյի Քաղաքապետարանից ստացած 150,000 դոլարի օգնությունը Սուրբ Երրորդության կառուցման ժամանակ եւ ներքնահարկի սրահը Կարոի առաջարկով պիտի անվանվեր ‘ԱՐԱՐԱՏ’ սրահ, նպատակը լինելով այն որ բոլոր հայության որբվե երկրից եկած որբէկ խավից, հայախոս թե ոչ, պարզորեն բոլոր ՀԱՅՈՒԹՅԱՆը ծառայի. ասպէս էլ եղավ: Հարգանք Կարո Սարտին-ի հիշատակին:

Այսպիսով մի ազգային լույսավոր հիշողություն մնում է պատմության գրկում և կյանքը շարունակվում է Մասչեղ Սուլեյմանում և Նաֆտի Ընկերության աշխատավորները շշուկներ են լսում Ընկերության տեղափոխվելու մասին:



Մշակույթ

Շայերը Իրանական բանակում  
(Պատմական համառոտ ակնարկ)

Պր. Էդ. Բաղդասարյան  
www.Edic-Baghdasarian.com  
edbagh@gmail.com

21- Սողոմոն Միմոնյան (Սուլեյման խան), Գեներալ Սողոմոն Միմոնյանը ծնվել է 1858թ., նա Ղաջարական դինաստիայի թագավորության ժամանակ ստանում է գեներալի աստիճան եւ ստանձնում զինվորական նվազախմբի ղեկավարի պաշտոնը, իր երաժշտական ուսումը ստացել էր Փարիզում:Նա իր մահկանացուն կնքեց 1933թ.:<sup>1</sup>

22- Եփրեմ խան Դավթյան (Ասիրբեկյան). ծնվել է 1868 թ. Գանձակի Բարսում գյուղում<sup>2</sup>, եղել է հայ Ֆիդայի եւ 1905-1911-ի իրանական հեղափոխության գործիչ: 1880-ական թվականների վերջերին միացել է Արեւմտյան Հայաստանի հայդուկային խմբերին: 1890-ին Սարգիս Կուկունյանի<sup>3</sup> խմբի արշավանքին մասնակցելու համար ձերբակալվել է Երևանում և աքաղաղվել է Սիբիր (1892), ապա Մախախին:1896-ին փախել է աքաղաղ, անցել Իրան<sup>4</sup>, որտեղ հարել է Դաշնակցությանը: Ջինվորագրվել է իրանական հակաՖեոդալական բուրժուական հեղափոխությանը՝ դառնալով նրա ակնավոր կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը: Երբ հեղափոխականները գրավեցին Գիլանի կենտրոն՝ Ռաշտ քաղաքը, Եփրեմը նշանակվեց Գիլան մահանգի ոստիկանության պետ<sup>5</sup>, իսկ Թեհրանի գրավումից հետո (1909-ի հուլիսի 10) նշանակվում է Թեհրանի եւ շրջանի պաշտպանության ուժերի հրամանատար եւ ոստիկանապետ<sup>6</sup>: Նրա կապը դաշնակցության տեղական օղակների հետ հետզհետե թուլանում է նա կապվում է կուսակցության բարձրագույն մարմնի հետ ժնեում:<sup>7</sup>

Եփրեմը գոհվեց Համադանի մոտ, Սուրջիեի ճակատամարտում (1912) եւ թաղվեց Թեհրանի Հայկազյան (Դավթյան) դպրոցի բակում: Եփրեմի զինակիցներից էին՝ Արշակ Գավաֆյանը (Քեռի, 1863-1916)<sup>8</sup>, Պետրոս խան Մելիք Անդրեասյանը, Աբրահամ խան Հովակիմյանը (1877-1963)<sup>9</sup> եւ ուրիշներ:

23- Ամիր Թուման Մարտիրոս խան, Կոզակների զորամասերի շտաբի պետ:<sup>10</sup> Նա Նոր Ջուղաեցի էր, ուսումը ստացել է Ռուսաստանում, Լազարյան ճեմարանում, վերադառնալով Պարսկաստան, Դար-օլ-

Ֆոնուն բարձրագույն դպրոցում գործի անցնում որպես ռուսերենի դասախոս: Նրան 1873 թվականին գեներալի աստիճան է շնորհվում, 26 տարի Կոզակ զորքերի հրամանատարի պաշտոնում ծառայելով: Նրա որդին՝ Էսքանդար խանը նաեւ Կոզակների զորքում սպայի պաշտոն ուներ, եւ հոր մահից հետո Ռուսերեն լեզվի ամբիոնը ղեկավարեց: Մարտիրոս խանը Ղաջարների տիրակալության վերջին տարիներում թագավորական թիկնապահ զորքի հրամանատարն էր:<sup>11</sup>

24- Գնդապետ Գրիգոր Սաղյանը (Գնդապետ Գիգո) ծնվել է 1876 թ. հունիսի 9-ին Շուշի գավառի Վարանդա շրջանի Բաթուկ գյուղում (Լարաբաղ), հայրը Սիքայել իսկ մայրը Շուշանը մահացել է Թեհրանում 108 տարեկան հասակում: Նա պատանեկան տարիներից արդեն իսկ ցուցաբերեց իր ընդունակությունը ռազմական գործերում:Նա հետագայում ծանոթանում է Սարգիս Կուկունյանին գանձակի բանտում, որի միջոցով ծանոթանում է Եփրեմ խանի անվան հետ, եւ երբ նա անցնում է Ղարադաղ ցանկանում է տեսնել վերջինիս, ապա երբ նրանք հանդիպում են Եփրեմը նրան ստիպում է այստեղ մնալ, այդպիսով Գիգոն միանում է Եփրեմ խանի հայդուկային խմբին: Հետագայում մասնակցել է Հայ-թաթարական կռիվներին:Պարսկաստանում մասնակցել է Շահեստանների կռիվին, Լոռեստանի՝ Ալի Գուդարգ, Բուրվարի կատարած արշավանքներին եւ այլն:Մահկանացուն կնքեց 1962 թվականի հունիսի 29-ին Թեհրանում, նրա շիրիմը գտնվում է Թեհրանի հայոց Դուլաբ գերեզմանոցում, դեպի մատուռ տանող ճամփեզրին:<sup>12</sup>

25- Աբրահամ խան Հովակիմյան (1877-1963). նրա ծննդավայրը հայկական Չհարմահայի Լվասկան գոլոն էր: Երիտասարդ տարիքում զինյալ խմբակ կազմակերպեց եւ անդրկովկասի ազատագրական շարժմանը միացավ, ապա մի քանի տարի անց իրան վերադարձավ եւ միացավ Իրանի Սահմանադրական շարժմանը:Նա 1920 թ. երբ Հովսեփ Արղությանը որպես Հայաստանի Հանրապետության դեսպան Իրան ժամանեց, նրա պաշտպանությունը ստանձնեց: Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո, նա միացավ Իրանի բանակին եւ մինչեւ թոշակի անցնելը ժրջանորեն ծառայեց բանակում եւ մի քանի արիության շքանշան ստացավ, նա 86 տարեկան հասակում մահացավ Թեհրանում:<sup>13</sup>

26- Պետրոս խան Մելիք Անդրեասյանը (1879-1912)<sup>14</sup>, Իրանի Սահմանադրական շարժման կառկառուն ղեմքերից է, մասնակցել Ռաշտից մինչեւ Թեհրան մղվող պատերազմներին: Նա Թավրիզը Յարական բանակից պաշտպանելու ընթացքում գերի է ընկնում եւ 1912 թվականի հունվարի 6-ին Թավրիզի մեջ կախաղան բարձրացվում:<sup>15</sup>

<sup>1</sup> Ժ. Լազարյան, Իրանահայ հանրագիտակ, (Պարսկերեն), Թեհրան, 2003, էջ 178:  
<sup>2</sup> Էսմաիլ Ռահիմ, Սպարապետ Եփրեմ խան (Պարսկերեն), Թեհրան 1355 (1976), էջ 41:  
<sup>3</sup> Անդրե Անուրյան, Եփրեմի ողիսականը, (Պարսկերեն), Թեհրան 1354 (1975), էջ 371:  
<sup>4</sup> Էբրահիմ Սահայի, Սահմանադրության արաջնորդները՝ Եփրեմ, (Պարսկերեն), Թեհրան (անթվակիր), էջ 10:  
<sup>5</sup> Յ. Էլմար, Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 204:  
<sup>6</sup> Էսմաիլ Ռահիմ, Գլխավոր աշխատությունը, էջ 273, նաեւ Աբաս-ալի Սալեհի, Նշանավոր քրիստոքյա հայրենակիցները, Թեհրան, (Պարսկերեն, անթվակիր), էջ 37:  
<sup>7</sup> Յ. Էլմար, Գլխ. աշխ. էջ 553-555:  
<sup>8</sup> Նույն տեղում:  
<sup>9</sup> Աբրահամ խան Բախտիարի Հովակիմյան, Թեհրան, 1965:  
<sup>10</sup> Էսմաիլ Ռահիմ, Իրանի Հայերը, (Պարսկերեն), Թեհրան, 1977, էջ 54:

<sup>11</sup> Անդրանիկ Հովսեփյան, Իրանի հայերը, Թեհրան, 2001թ, էջ 394-95:  
<sup>12</sup> Շուշիկ Սաղյան, Գնդապետ Գիգոյի կյանքն ու գործունեությունը:Ամտիպ, տողերիս հեղինակի մոտ գտնվող ձեռագիր լուսապատճեն օրինակ, որը ստացել ենք հարգելի Պրն. Հովիկ Էդգարյանից որը իր հերթին նա ստացել է գնդապետ Գիգոյի թոռան Պրն. Արտուշ (Հարություն) Քուչուկյանից 1997թ. Լոնդոն.:  
<sup>13</sup> Նույն տեղում, էջ 173-174:  
<sup>14</sup> Ն. Մամյան, Անվեհեր հեղափոխական ռազմիկը՝ Պետրոս խան, Ալիք օրաթերթ, Թեհրան 1972, հոկտեմբերի 29,30,31:  
<sup>15</sup> Ժ. Լազարյան, Իրանահայ հանրագիտակ, (Պարսկերեն), Թեհրան, 2003, էջ 172-173:

- 27- Գնդապետ Գրիշ(ա) խան Գանիեյան: Նա 1886 թ. Գանձակում ծնվեց, իր ուսումը ավարտելով Վարշավայի զինվորական համալսարանում 1909 թ. միացավ Եփրեմին: Եփրեմ Գավթյանի զինակիցն էր Իրանի սահմանադրական հեղափոխության ժամանակ եւ Թեհրանի ոստիկանության հրամանատարը Գնդապետի աստիճանով (1911-1914):<sup>16</sup> Նա չորս տարի բանակից հեռանալուց հետո, նաշանակվեց Մեշեդի զինդատախազ, ապա Խուզատանի ներքին գործերի հրամանատար: Նա 1933 թ. իր մահկանացուն կնքեց Ահվազ քաղաքում եւ զինվորական արարողությամբ նրա դին հողին հանձնվեց Թեհրանում:<sup>17</sup>
- 28- Գնդապետ Սմբատ Եղիազարյանը ծնվել է 1888թ. Հայաստանում: Նա 1921թ. տեղափոխվել է Իրան եւ հաստատվել Թավրիզում եւ անմիջապես աշխատանքի անցել զինվորական հիվանդանոցում կապիտանի աստիճանով: 1940 թվականին ստացել է գնդապետի աստիճան եւ փոխադրվել Թեհրան ու զբաղվել է բժշկությամբ: Մահացել է 1962 թ. Թեհրանում:<sup>18</sup>
- 29- Լեյտենանտ Սկրտիչ խան Գավթյանյան, գեներալ Սարգիս խանի զավակը ծնվել է 1902թ. Նոր Ջուղա, տաս տարեկան հասակում տեղափոխվում է Հայաստան ուսումը շարունակելու համար, 13 տարեկանում մասնակցում է հայ-թուրքական կռիվներին: Պատերազմի ավարտից հետո Սպահան է վերադառնում եւ միանում Իրանի բանակին, ապա նշանակվում ԳեզՖուլ քաղաքի զինվորական հրամանատար, եւ խոշոր դեր ունենում ըմբոստ Շեյխ Խազաալին պարտության մատնելու եւ ձերբակալելու գործում, որի համար արժանանում է երկրորդ կարգի Մեփահ շքանշանով, իսկ գեներալ-մայոր Ջահեդիի հրամանով Սարդար Մեփահի (Ռեզա Փաիլավի սպարապետ , հետագայում թագավոր) թիկնապահների պետ նշանակվեց: Նա 1950թ. հրաժարվում է զինվորական ծառայությունից եւ 1983-ին ին մահկանացուն կնքում:<sup>19</sup>
- 30- Գեներալ Լեւոն Վարդանի: Ծնվել է 1906 թ. Թեհրանում: Ուսումը ստացել է Եվեցարիայի Ժնեվում, ապա 1927-30 թթ. պաշտոնավարել է Ջինվորական Ֆակուլտետում որպես Ֆրանսերենի դասախոս: Նա գեներալի աստիճանը ստացել է 1955թ. եւ իր մահկանացուն կնքել 1963թ. Թեհրանում:<sup>20</sup>
- 31- Չորիկ Սոլխանյան, ծնվել է 1925 թ. Մեշեդում: Նախնական ուսումը ստացել է ծննդավայրում ապա ընդունվել Թեհրանի համալսարան, սակայն թողնելով դա 1951թ. միանում է Իրանի բանակի Օդային ուժերի ճարտարագիտան ֆակուլտետին եւ ավարտում կապիտանի աստիճանով: 1954թ. Օդային ուժերի տարբեր բաժանմունքներում սկսում է իր ծառայությունը, ապա Դուշանթափեի ուսուցման բաժնի պատխանատվությունն է ստանձնում: Նա 1971 թ. որպես Օդային ուժերի հանձնաժողովի ներկայացուցիչ մեկնում է ԱՄՆ: Իր մատուցած ծառայությունների համար նշանակվում է Հարավային Մեհրաբադի ռազմական ուսումնարանի պետ, ապա ստանում

- գնդապետի աստիճան: Չորիկ Սոլխանյանը 1991թ. իր մահկանացուն կնքեց Միացյալ Նահանգներում:<sup>21</sup>
- 32- Գնդապետ Էմիլ Հակոբյանը ծնվել է 1928 թ. Թավրիզում: Նախնական ուսումը ստացել է ծննդավայրում, իսկ բարձրագույնը Թեհրանի Համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետում (1946), միեւնույն ժամանակ ավարտել է նաեւ Ջինվորական ֆակուլտետը, ապա միացել Իրանի բանակին եւ 31 ամբողջ տարիներ հավատարմորեն ծառայել եւ մինչեւ գնդապետի աստիճանի հասել: Նա երկրի տարբեր շրջաններում զինվորական-շինարարական աշխատանք է ծավալել, իր վերջին պաշտոնը Յամաքային ուժերի Շինարարական նորոգումների եւ Ջինվորական կառույցների տնօրինությունն էր: Նա 1977 թ. գնդապետի աստիճանով թոշակի է անցնում: Գնդապետ Հակոբյանը ակնառու դեր է ունեցել Իրանի հայկական պատմական եւ մշակութային փաստերի հավաքման եւ պահպանման գործում, հրատարակել է «Հուր» երկլեզու (հայերեն-պարսկերեն) ամսագիրը Դոկտոր Գագիկ Հովակիմյանը հետ մախին: Ուսումնասիրել է Իրանի Ատրպատականի հայկական վանքերն ու եկեղեցիները, թարգմանել եւ հեղինակել է հետազոտական աշխատություններ: Նա շուրջ 50 տարի Ատրպատականի պատգամավորական ժողովի ատենապետն էր: Գնդապետ Էմիլ Հակոբյանը իր մահկանացուն կնքեց 2001թ.:
- 33- Ծովակալ Սիրուս Եղիազարյանը ծնվել է 1931թ. Թավրիզում: Բարձրագույն կրթությունը ստացել է Իրանի Ռազմագիտական բարձրագույն ուսումնարանում, Իտալիայի Ծովային ուժերի ակադեմիայում ապա ԱՄՆ-ի Ծովային ուժերի ակադեմիայում: Նա զուգահեռաբար ուսանել է Պաշտմանության տնօրինություն 1977թ. ապա վերադարձել Իրան եւ ստանձնել զանազան ռազմանավերի հրամանատարություն, օրինակ՝ Իրանի ծովային ականագերծման հրամանատարություն, Արտեմիս ռազմանավի հրամանատարությունը՝ Աբումուսա, Մեծ եւ Փոքր Թոմբ կղզիների ազատագրման ժամանակ: Նա նաեւ Բանդար-Աբբասի նավատորմի ուսումնական կենտրոնի հրամանատար՝ տնօրենն է եղել: Իր վերջին պաշտոնը կենսաթոշակի անցնելուց առաջ, Ռազմական գործողությունների հրամանատարությունն է եղել Ծովային ուժի շտաբում:<sup>22</sup>
- 34- Գնդապետ դոկտոր Ռուբեն Շահումյան, Իրանի բանակի բժշկական բաժանմունքների բժիշկ, կենսաթոշակի անցելուց հետո մինչեւ իր մահը ծառայեց Թեհրանի հայաբնակ Ջեյթուն թաղամասի հայ եւ պարսիկ ժողովրդին:
- 35- Գնդապետ դոկտոր Վարդան Բեկ-Խանյանը Իրանի բանակի բժշկական բաժանմունքների բժիշկ, կենսաթոշակի անցելուց հետո ծառայեց Թեհրանի հայաբնակ Մասուն թաղամասի հայ եւ պարսիկ ժողովրդին: Մասնակցել է Իրան թագավոր Մահմեդ Ռեզա Շահի զինվորական հատուկ բանակցային խմբին, որը մեկնել էր Մոսկվա: Նա վախճանվեց 2009 թ. ապրիլի 18-ին:
- 36- Հարություն Թահմազյանը (Թովմասյան) ծնվել է 1939թ. Նոր Ջուղա (Իրան), նախնական ուսումը ստացել է ծննդավայրում, ապա բարձրագույնը շարունակել Թեհրանի Համալսարանի Անասնաբուժական ֆակուլտետում, հետո միանում Իրանի Բանակին: Հետագայում ուսանում է նաեւ նույն համալսարանի

<sup>16</sup> Էսմաիլ Ռահն, Եփրեմ խան, (Պարսկերեն), Թեհրան, էջ 485, 503:

<sup>17</sup> Ժ. Լազարյան, Իրանահայ հանրագիտակ, (Պարսկերեն), Թեհրան, 2003, էջ 174:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 180:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 179:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 177-178:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 180-181:

բժշկական Ֆակուլտետում տարրալուծական գիտությունների ճյուղը, ավարտելով այն, նշանակվում է Շիրազ քաղաքի զինվորական հիվանդանոցի տարրալուծարանների բաժնի տնօրեն: Նա 1981 թվականին ստանում է գնդապետի աստիճան: Անդամակցում է Հայ Բժիշկների միությանը:<sup>23</sup>

**37-** Գնդապետ Արտեմ (Արտիմ), Մելիքյանը ծնվել է 1947թ. Սպահանում (Իրան), նախնական ուսումը ստացել է ծննդավայրում, ընդունվել է Սպահանի համալսարանի հայոց լեզվի ու գրականության ճյուղը, սակայն մեկ տարի անց անավարտ թողնելով, ընդունվել է Չինվորական Ֆակուլտետ, Թեհրան: Սովորել է ռազմական ուղղաթռի եւ օդանավների օդաչու: Հատուկ փորձառական օդաչուի կրթաշրջան է անց կացրել Իտալիայում: Նա աժխույժ դերակատարություն է ունեցել իրանա-իրաքյան ութամյա պատերազմի տարիներին, որի համար ստացել է գնահատագրեր:<sup>24</sup>

**38-** 1980-1988 թվականների իրանա-իրաքյան պատերազմին իրանահայերը աշխուժորեն մասնակցեցին: Պատերազմի առաջին նահատակ զինվորն էր թեհրանաբնակ Ջորիկ Մուրանյանը<sup>25</sup>, այնուհետև՝ հայերը ունեցան մի քանի տասնյակ նահատակներ:<sup>26</sup>

**Շար. 2 եւ վերջ**

**Ստացած գրություն**

*Հարգարժան Խմբագրություն,  
կից ուղարկում եմ «ԿՈՉ» հայտարարությունը՝  
ընտրությունների վերաբերյալ:  
Խնդրում եմ, եթե հարմար էք գտնում, Ձեր թերթում  
հրատարակել:*

*Բարեկամական ջերմ ողջույններով՝  
Երվանդ Խոսրովյան*

**ԱՋԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ  
ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ ԵՐԿՐԻ ԴԵՎՍՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒԹՅՆ Է  
ԿՈՉ**

Մարդու ամենաառաջնային իրավունքը ընտրությունն է: Ընտրությունները պետք է կատարվեն ազատ եւ առողջ մթնոլորտում: Ոչ բարենպաստ մթնոլորտում տեղի ունեցած ընտրությունները չեն ծառայում իրենց բուն նպատակին, խախտում են հասարակական եւ քաղաքական հավասարակշռությունն ու կործանում են երկիրը: Ընտրական իրավունքի ոտնահարման, խախտման եւ խոչնդոտման դեպքում, ոչ թե խախտվում կամ ոտնահարվում է միայն քաղաքացու իրավունքն, այլև ստեղծում է հասարակության մեջ ոչ հավասարակշիռ բեկեռներ եւ «երկիր նավակը» կորցնում է իր հավասարակշռությունն ու խորտակվում է: Իսկական ժողովրդավարությունը անցնում է հենց ճիշտ եւ անկեղծ ու արդար ընտրությունների խողովակով:

Յուրաքանչյուր երկրի առաջադիմության, զարգացման եւ բարգավաճման երաշխիքը ազատ եւ արդար ընտրություններն են, որի միջոցով անընդհատ փոփոխվում եւ թարմանում է քաղաքական ուժն ու ստեղծվում է իսկական քաղաքական մրցույթ՝ ոչ թե հանուն սեփական շահի, այլ հանուն երկրի զարգացման եւ բարգավաճման, հանուն ժողովրդի բարեկեցիկ կյանքի:

Անցյալ ընտրություններում բացակայում էր վերոնշյալ տրամաբանությունը: Արդյունքում տեղի ունեցան ցավալի դեպքեր, մարդկային կորուստներ եւ ստեղծվեց քաղաքական ոչ առողջ մթնոլորտ: Այդ ամենը պատճառ հանդիսացավ, որ երկիրը գտնվի արտաքին մեծ ու փոքր ուժերի շանտաժի ու ճնշման տակ: Երկրի ներսում բեկեռացվում է քաղաքական եւ սոցիալական դաշտը, ինչը լավ բան չի նախատեսում մեր առանց այդ էլ շրջափակման մեջ գտնվող երկրի համար:

Մեզ մտահոգում է մայիսի 2-ից սկսած ընտրական քարոզարշավում տեղի ունեցող հերթական անօրինականությունները, ստեղծված պայմաններն ու մթնոլորտը: Նորից գործի են դրվում հին մեթոդները: Լրատվական միջոցներից տեղեկանում ենք, որ փորձ է արվում զինծառայողներին ներքաշել ընտրությունների մեջ՝ ի շահ հատուկ ուժերի օգտին քվեներ ձեռք բերելու համար: Չինծառայողի ընտրություններին մասնակցելը օրենքով արգելվում է եւ իրականացման դեպքում դա այլ բան չէ, եթե ոչ բացահայտ լցոնումներ եւ ընտրական օրենքի կոպիտ խախտում:

Հայաստանի ղեկավարությունը, իշխանությունները եւ բոլոր պատասխանատու մարմինները, ինչու չէ նաեւ քաղաքական բոլոր ուժերը պետք է գիտակցեն, որ իրենց կողմից թույլ տրված ցանկացած սխալ քայլ, անօրինականություն կամ բռնություն, լինի դա ընտրությունների հետ կապված, թե դատական համակարգի ու կարգապահական ծառայություններին առնչվող երեւույթ, հասարակության մեջ ստեղծում է անհամերաշխություն եւ անվստահություն, բացասական ազդեցություն է թողնում նաեւ ամբողջ սփյուռքահայության մոտ: Համանման բացասական եւ ոչ առողջ երեւույթները Հայաստանի իշխանությունների նկատմամբ, նրանց մոտ առաջացնում է անվստահություն եւ հակակրանք, իսկ սեփական հայրենիքի ապագայի նկատմամբ թերահավատություն ու կասկած: Պառակտվում է ազգն ու վնասվում է մեր ժողովրդի միասնականությունն ու սփյուռք-հայրենիք իսկական հարաբերությունները:

Ուստի, ելնելով անցյալի փորձից եւ ներկա ընտրական քարոզարշավի մթնոլորտից, հայտնում ենք մեր խոր մտահոգությունը, եւ կոչ ենք անում Հայաստանի ղեկավարությանը, իշխանություններին, քաղաքական ուժերին եւ բոլոր պատասխանատու մարմիններին, գերծ մնալ առճակատումներից, վերջ տալ կաշառքով քվեներին, հեռու մնալ կեղծելու եւ ոչ կորրեկտ ընտրական քաղաքականությունից, վերադառնալ ընտրությունների բուն իմաստին, հարգել ժողովրդի կամքն ու կարծիքը, նրա ընտրությունն ու ընտրելու ազատ իրավունքը, ապահովել հանգիստ, խաղաղ եւ արդար ընտրություններ:

22 մայիսի 2009 թ.

- Հայ Ազգային Մշակութային Կենտրոն (Գերմանիա)
- Նախաձեռնող խումբ (Եվրոպա)

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 178:  
<sup>24</sup> Նույն տեղում, էջ 179:  
<sup>25</sup> Քրիստոնյա նահատակները, հեղափոխության կարմիր կակաչները, Թեհրան 1984, էջ 9:  
<sup>26</sup> Արման Բուդաղյան, «Գուլե Մարյամ, Իրանահայերի դերը իրան-իրաքյան ութամյա պատերազմում», Թեհրան, 2006, էջ 223-862: